

ՓՈՂԻ ՀԵՐՈՍԸ *)

(Les affaires sont les affaires)

Կոմեդիա 3 գործողութեամբ

ՕԿՏԱԻ ՄԻՐՔՅՈՒ

(Թարգմանութիւն Ֆրանսերէնից)

ԵՐԿՐՈՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Միւս օրը առաւօտեան

ՎԵՅԵՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ԺԵՐՄԷՆ, յետոյ մի ՍՊԱՍԱԽՈՐ, ապա ԺԻԻԼԻ, աղախինը.

(Լիւսիէնի հեռանալուց յետոյ Ժերմէն հնչեցնում է զանգակը. զալիս է մի սպասաւոր):

ԺԵՐՄ. Գնացէք, խնդրեմ, ասացէք Ժիւլիին, որ իսկոյն
և եթ զայ այստեղ, ինձ մօտ:

(Սպասաւորը դուրս է գնում:— Ժերմէն քայլում է:— Նա վերցնում
է վազայի միջից մի ծաղիկ... հոտ քաշում... նայում պատուհանից:—
Ներս է զալիս Ժիւլի):

ԺԵՐՄ. Ժիւլի... ինձ համար մի մեծ սնդուկ կը պատրաս-
տէք... իմ սպիտակեղէնը... չորերս... իմ անհրաժեշտ իրերը
մէջը դնելով...

*) Տես «Մուրճ» № 9:

ԺԻԻԼԻ. Լաւ, օրիորդ:

ԺԵՐՄ. (Մտածելուց յետոյ մի վճռական շարժումաձք անելով). Իմ ականդէններս էլ... բոլոր ականդէնս...

ԺԻԻԼԻ. Լաւ, օրիորդ... (Լռութիւն). Ճանապարհորդելու էք գնում, օրիորդ:

ԺԵՐՄ. Չք գիտեմ...

ԺԻԻԼԻ. Ուրեմն... բոլորովին էք հեռանում...

ԺԵՐՄ. Ինչու էք դուք ինձ այդ հարցնում... Ժիւլի...

ԺԻԻԼԻ. Օ՛հ, որովհետեւ...

ԺԵՐՄ. Ո՛չ մի բառ... ո՛չ սքի...

ԺԻԻԼԻ. Իսկ ես... օրիորդ:

ԺԵՐՄ. (Քիչ նրան նայելուց յետոյ). Գնացէք... սիրելիս...

(Ժիւլին դուրս է գնում):

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԺԵՐՄԷՆ, յետոյ ԻՍԻԴՈՐ ԼԸՇԱ, ՖԻՆԿ, ԳՐՈԻԳ.

(Ժերմէնը սեննակից դուրս գալու րոպէին մտնում են Իսիդոր, Ֆինկ եւ Գրուգ).

ԻՍԻԴ. Այդ գո՛ւ ես... Ժերմէն... Ինչպէս... ուրեմն դու եկեղեցի չես գնացել:

ԺԵՐՄ. Ո՛չ... ես պարոն Գարրօի հետ էի:

ԻՍԻԴ. Գարրօի հետ:

ԺԵՐՄ. Այո՛:

ԻՍԻԴ. (Նայելով ամենուրեք). Իսկ դու է՛նա՝ իմ ազնիւ Գարրօն:

ԺԵՐՄ. Իր բնակարանն է վերադարձել:

ԻՍԻԴ. Ի՞նչ էր ուզում աեսնել:

ԺԵՐՄ. Բնաւ ոչ...

ԻՍԻԴ. Ի՞նչ էր նա աշատեղ անում:

ԺԵՐՄ. (Փոքր լռութիւնից յետոյ խորիտաբար նայում է հօր վրայ). Կիմանաս:

(Գուրս է գնում արագութեամբ):

ՈՒԹԵՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԳ, յետոյ մի ՍՊԱՍԱՒՈՐ.

ԻՍԻԴՈՐ. (ձերմէնի ետեւից երկար նայելով). Քիչ տարօրինակ է այդ... քիչ... (ձակատին խփելով). Սակայն զեղեցիկ աղջիկ է, չէ... Հիանալի հարսնացու... (Ֆինկին). Դու ամուսնացած ես:

ՖԻՆԿ. Աւաղ:

ԻՍԻԴՈՐ. (Գրուզին). Իսկ զո՞ւ...

ԳՐՈՒԳ. Ես նոյնպէս...

ԻՍԻԴ. Է՛ն... Իմ զաւակներս... դա ախրան էլ լաւ չէ... Աւելի վատ... ձեզ համար... Լաւ... լաւ... մեր գործը սխեմք: (Ներս է դալիս մի սպասաւոր):

ՍՊԱՍ. Պարոն, ձեզ հեռախօսի մօտ են խնդրում:

ԻՍԻԴ. Ո՞վ է...

ՍՊԱՍ. Petit Tricolore-ից, պարոն...

ԻՍԻԴ. Վա՛յ թշուառական... հա ճիշտ... (Գրուզին եւ Ֆինկին) Մի վայրկեան... (Սպասաւորին) Իսկ դու գնա՞... Պորտօն բեր...

ՍՊԱՍ. Ինչ Պորտօ... (Գրուզին եւ Ֆինկին նայելով) Գործերի պորտֆէյլը...

ԻՍԻԴ. Պորտօ գինին... յիմար... ե սիգարները...

ՍՊԱՍ. Պարոն, դուք գիտէք, որ սիգարների արկղի բանալին ինձ մօտ չէ... Տիկինն է...

ԻՍԻԴ. (Սպասաւորին հրելով). Տիկինը... տիկինը... Ո՞վ է քեզ բան հարցնում, տիմար... Իմ բոլոր սիգարները հէնց դու ես գողանում, անպիտան զարչելի... Հը... գնա... շուտ...

(Նրան հրում է: Սպասաւորը ղուքս է գնում:—Իսիդոր ձախ դնում զնում է իր կարփնետը:

ԻՆՆԵՐՈՐԳ ՏԵՍԱՐԱՆ

ՖԻՆԿ, ԳՐՈՒԳ.

(Յուզուած ման են դալիս սենեակի մէջ)

ՖԻՆԿ (Ջրային սաստիկ յուզուած դրուժեան մէջ). Այս առաւօտ ես ինձ ախրան էլ լաւ չեմ գտում... Այնքան էլ համարձակութիւն չ'ունեմ... Յետոյ... ինչ ծածկեմ... Ես այլեւ վատհու-թիւն չ'ունեմ...

ԳՐՈՒԳ. Ես ձեզ չեմ հասկանում... Ես ձեզ հաւատացնում եմ... որ նա մի իդիոտ է, իդիոտ:

ՖԻՆԿ. (Յոյց տալով դուռը). Այդպէս բարձրաձայն մի խօսէք... Եթէ նա իդիոտ լինէր, այդքան փող չէր աշխատի...

ԳՐՈՒԳ. Իսկ նրա չաքարեղէզնի թէնրիան:

ՖԻՆԿ. Դա ջուկ հարց է... Յիշում էք՝ որպիսի արտաքոյ կարգի սրատեսութեամբ, նոյնիսկ պերճախօսութեամբ... նա մեզ պատմեց Մայրագոյն-Կենտրոնի երկաթուղիների պատմութիւնը... Ի՞նչ հրաշալի, յանդուգն ձեռնարկութիւն:

ԳՐՈՒԳ. Բախտի բերմունք:

ՖԻՆԿ. Ձեր յամառութիւնը ինձ վախեցնում է... Ես ձեզ ասում եմ, որ այս մարդը գործերի և իր ժամանակի պահանջների մասին հրաշալի հասկացողութիւն և հոտառութիւն ունի... Զգուշանա՛նք... Մի անգամ ես համառօտեմք մեր որոշումը...

ԳՐՈՒԳ. (Չանմոյթով). Դա կը լինի եօթներորդ անգամը...

ՖԻՆԿ. Խոստովանէ՛ք արդեօք մեր նախահաշի գաղտնիք—խարդախութիւնը... Այդ դուցէ վտանգաւոր է... նա մեզ գող-խաբեքների տեղ կ'ընդունի...

ԳՐՈՒԳ. Ո՛չ... խօրամանկների... Հարկաւոր է նրան ազդել, հարկաւոր է, որ նա իմանայ, թէ ովքեր ենք... մենք... ինչ բանի ընդունակ, կարող...

ՖԻՆԿ. Լաւ... ճիշտն ասած, այդպէս դուցէ աւելի լաւ կը լինի... Իսկ կառուցանողներից մեր ստանալիք չահերը:

ԳՐՈՒԳ. Մի՛թէ նա այդ մասին կը մտածէ:

ՖԻՆԿ. Իսկ եթէ մտածէ:

ԳՐՈՒԳ. Ես կը հերքեմ յամառաբար, որ այդպիսի չահ չը կայ...

ՖԻՆԿ. Դուք կը հերքէք... դուք կը հերքէք... Հա՛, մի բան ես... ազաչում եմ... նորից չը կրկնէք, թէ ջրվեժի տեղը գտնուում է զինուորական հողագօտի վրայ... և դրանից առաջ եկող զժուարութիւնների, խաչընդոտների վրայ չը պիտէ, հա՛...

ԳՐՈՒԳ. Թողէ՛ք ինձ... ես իմ անելիքս գիտեմ... Ազնիւ խօսք... կարծես թէ... դուք էք այս կոմբինացիայի հեղինակը, հնարողը...

ՖԻՆԿ. Դա ամենաթոյլ կողմն է... նա իսկոյն կը գուշակէ մեր անկարողութիւնը...

ԳՐՈՒԳ. Մենք զրա մասին կը խօսենք... կը վիճենք...

ՖԻՆԿ. Ես հէնց զրանից եմ վախենում... Ես ձեզ կրկնում եմ, որ այդ մարդը սատանայ է, սատանայ... Իսկ ալիւմինիումը:

ԳՐՈՒԳ. Մենք չենք կարող զրա մասին չը խօսել, որով-

հետև դա մեր ձեռնարկութեան ամենալաւ տարրերից մէկն է... որը նրան կը հրապուրէ, կը քաշէ...

ՖԻՆԿ. (Գլուխը բորելով). Անկասկած...

ԳՐՈՒԳ. Սակայն... միւս կողմից... հարկաւոր է նրան եւ մի բան թողնել...

ՖԻՆԿ. (Նստնդով). Որքան կարելի է քիչ...

ԳՐՈՒԳ. Իհարկէ... Սակայն հարկաւոր է դարձեալ...

ՖԻՆԿ. Յամենայն դէպս... ծայրայեղ դիպուածում... իմ արտօնագիրը կայ... իմ արտօնագիրը...

ԳՐՈՒԳ. (Հեզմարար եւ ուսերը վեր թօթուելով). Ձեր արտօնագիրը... Օհ... Օհ...

ՖԻՆԿ. Այո, իմ արտօնագիրը... լաւ իմացէք, որ ես նրան ձրի, մուֆտա չեմ տալ...

ԳՐՈՒԳ. Անտարակոյս:

ՖԻՆԿ. Գալով ոռճիկների հարցին... անյողողող եղէք...

ԳՐՈՒԳ. (Գրողուած). Անշուշտ, անշուշտ...

ՖԻՆԿ. Դուք ասում էք. «Անշուշտ, անշուշտ» եւ վերջին պահուն միշտ զիջում... Մանաւանդ ազդանունը եւ հասցէն յանկարծ չ'ասէք, հա... Պայմանագիրը կապելիս կը յայտնենք... երբ էլ ըշա այլեւ անկարող կը լինի իր խօսքերից յետ կանգնել...

ԳՐՈՒԳ. (Գարծեալ դրողուած). Լաւ... լաւ... (Ղուռթկում). Ի՞նչ դուք էլ քիչ խօսեցէք... Ուղղակի ցաւալի է... երբ դուք սկսում էք խօսել... Մարդ ոչինչ չի հասկանում... Ամենապարզ բաներն անգամ դուք, ըստ ձեր քմահաճոյքի, խառնում, չփոթում էք...

ՖԻՆԿ. Անտարակոյս... հէնց այդպէս էլ հարկաւոր է...

ԳՐՈՒԳ. Ո՛չ միշտ...

ՖԻՆԿ. Ուրեմն... ես մի տխմար եմ...

ԳՐՈՒԳ. Սուս, լռեցէք... նա զայիս է:

(Նրանք աշխատում են անփոյթ երեւալ... Ձեռքերով շարժուածքներ անելով նայում են խորհրդի պատկերին: Ուրախ, ձեռքերը իրար շփելով ներս է զայիս խորհրդ):

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐՄՆ

ԻՍԻԴՈՐ, ԳՐՈՒԳ, ՖԻՆԿ, յետոյ մի ՍՊԱՍԱՒՈՐ.

ԻՍԻԴ. (Տեսնելով նրանց իր պատկերի առջեւ կանգնած, նրանով հիանալիս). Բռննայի վրձինին է պատկանում, իմ դաւախներս... ինչպէս Հանրապետութեան նախագահների պատկերները...

Սպասեցէք... սպասեցէք... (Վառում է իրիտրական երկու ընդհանր-
տորները: Յետ յետ զնալով՝ նայում է) Նայեցէք... Ահա... այստե-
ղից... Ընչ կասէք:

ՖԻՆԿ. Սքանչելի... Ազդու...

ԳՐՈՒԳ. Եւ սրպիսի նմանութիւն:

ԻՍԻԴ. (Գրուզի ուսին խփելով). Երեսուն եւ հինգ հազար
ֆրանկ, իմ բարեկամս... Իսկ այս Պորտոն... (Հէնց այդ րոպէին
ներս է գալիս մի սպասաւոր, ձեռքին մի պնակ). Ի՞նչու այսքան ու-
շացար... (Նայելով շիշին). Լաւ բան է այս Պորտոն, չէ... (Սպա-
սաւորը պնակը դնում է սեղանի վրայ). Եւ դուք փակիր... Ոչ որի
ինչ մօտ չ'ընդունէք... բացի իմ որդուց... երբ նա գայ... (Սպա-
սաւորը դուրս է գնում՝ ետեւից դռները փակում). Օհ, վերջապէս մենք
կարող ենք հանգարտ կերպով խօսել... (Պորտոն է ածում բաժակ-
ները). Ձեր կենացը, իմ զաւակներս... (Նրանք խմում են):

ՖԻՆԿ. (Համը առնելով). Սքանչելի է...

ԻՍԻԴ. (Նոյնպէս համը տեսնելով). 1804 թւականի... Ի՞նչ
կասէք, հը... (Բաժակը դնում է պնակի վրայ). Եւ այժմ... ես լսում
եմ ձեզ... (Գրուզ կանգնած, թիկունքը յենած վառարանին, հռետորի
ղիւր ընդունած). Հետոք, ուրեմն, դու ես:

ԳՐՈՒԳ. Եթէ դուք թոյլ կը տաք:

ԻՍԻԴ. Լաւ, սկսիր... Սակայն ոչ գրականութիւն... ոչ
ֆրանսեր... Եւ աշխատիր կարճ կտրել (Վըշա նստում, խորասուզ-
ւում է մի բազկաթոռի մէջ, գլուխը յետ գցում, ոտքերը բարձրացնում:
Ֆինկ նստում է դրասեղանի մօտ եւ Գրուզի խօսելու ժամանակ
նա պորտֆէլից ձեռքի է հանում եւ փռում իր առջեւ):

ԳՐՈՒԳ. Եւրոպայի արդիւնաբերութեան ներկայ յառաջա-
դիմական շարժումը ձեզ քաջ յայտնի է. հետեւաբար դուք լաւ
կ'իմանաք, որ արդիւնաբերութեան ապագան ամբողջովին ե-
լակտրականութեանն է պատկանում... Շվէյցարիան... և Գերմա-
նիան...

ԻՍԻԴ. (Առանց տեղից շարժուելու). Անցիր... այդ ընդհանուր
նկատողութիւնները մի կողմ թող... անցիր... Արձանի բաց-
ման հանդիսում չենք գտնում մենք... և դու էլ քո խօսքը
բիւստերի չես ուղղում... Երկու բառով... եթէ կարող ես...

ԳՐՈՒԳ. Երկու բառով, լաւ... Հարկաւոր է ֆրանսիան
ևս օժտել այն մեծ և օրինակելի հիմնարկութիւններով, որ ու-
նեն Շվէյցարիան և Գերմանիան...

ԻՍԻԴ. Գերմանիան և Շվէյցարիան հանգիստ թող...

ԳՐՈՒԳ. (Շարունակելով). Նոյնիսկ աւելի նշանաւոր... աւե-
լի վեթիւրի...

ԻՍԻԴ. Ի՞նչ շատախօսն է եղել:

ԳՐՈՒԳ. Ես համարձակում եմ ասել՝ այն դորժը, որ պատիւ ունեւմ ձեզ ներկայացնելու, երկու կողմ՝ ունի... Նախ որ նա հայրենասիրական է...

ԻՍԻԴ. Ինչպէս առհասարակ ըստ դորժերը... դա, յայտնի է...

ԳՐՈՒԳ. Յետոյ դա մի հիմնալի ձեռնարկութիւն է...

ԻՍԻԴ. Այդ... դեռ կը տեսնենք...

ԳՐՈՒԳ. (Արդէն քիչ քաշուամաշում է եւ սկսում է քառեր փնտրել). Քանի որ ես խօսում եմ գործերին քաջ տեղեակ մարդու հետ... ես այլեւ կարիք չ'ունեմ թւել միամտի այն ըստը, ինչ որ կարելի է ելեկտրականութեամբ անել...

ԻՍԻԴ. Իհարկէ... իհարկէ...

ԳՐՈՒԳ. Եւ վերջապէս... դա շատ պարզ բան է եւ կարելի է համառօտել այսպէս՝ ամեն ինչ... Ելեկտրականութեամբ կարելի է ամեն ինչ անել... Նախ...

ԻՍԻԴ. Թող... թող... անցիր...

ԳՐՈՒԳ. (Քիչ շփոթուած). Սակայն գուցէ ինձ պիտի ասէք...

ԻՍԻԴ. Դուք ըստըստին ոչինչ չեմ ասում... գործին դիմենք... քսան հազար ձիաոյժի մի ջրվէժ ունէք... Մենք այդ դիտենք... Շատ լաւ... Ո՞րտեղ է նա դառնում:

ԳՐՈՒԳ. Թոյլ տուէք ինձ՝ նախ բացատրեմ ձեզ գործը իր ընդհանուր դերով... մանրամասնութիւններով մենք յետոյ կը զբաղուենք...

ԻՍԻԴ. Շարունակիր... շարունակիր... Միայն թէ այդ ջրվէժը լուսնի վրայ չը լինի...

(Հեղնում է):

ԳՐՈՒԳ. Այդ անզուգական ջրվէժը... գտնւում է լեռներում... մի բազմաբնակ եւ արդիւնաբերական քաղաքից քսանուկից կիլոմետր հեռու... Այդ քաղաքին գաղ մատակարարող ընկերութեան պայմանագրի ժամանակը երեք տարուց յետ լրանում է... Քաղաքային մուկիցիպալիտետը նորագոյն յառաջադիմական գաղափարներով տոգորուած...

ԻՍԻԴ. Դու այնքան էլ մի ծանրանար մուկիցիպալիտետների յառաջադիմութեան վրայ... Ես նրանց ճանաչում եմ...

ԳՐՈՒԳ. Այս քաղաքին կամենում է մեզ հետ համաձայնութեան գալ...

ԻՍԻԴ. Այդ կաշառքի հարց է միայն... Դա էլ վերջացաւ... յետոյ...

ԳՐՈՒԳ. Տաք ջրերի երեք նշանաւոր կայարաններ, որ շատ յաճախորդներ ունեն, նոյնպէս գտնւում են ջրվէժի հողերի վրայ... Այդտեղ են նոյնպէս իննսուներկու մեծ հիւրանոցներ...

Վերջապէս ամենազլխաւորը, որ գործի ամենաբացառիկ նշանակութիւնն է կազմում, դա բոքսիտի այն ծայրայեղ հարուստ հանքերն են, որ գտնւում են ջրվէժին կից հողերի վրայ... Ձեռքի տակ տեղնուտեղն ունենալով մետաղ... ոյժ ու ջերմութիւն... մենք կարող ենք ալիւմինիումի գործարան հիմնել... և Գերմանիայի հետ մրցել...

ԻՍԻԴ. Լաւ, լաւ... այդ պարզ է...

ՖԻՆԿ. Անթիւ, անհաշիւ... օգուտներ...

ԻՍԻԴ. Այո, այո... Միայն այժմ դեռ չը հաշուենք... (Նստեղից բարձրանում է... ձեռքերը դրած յետեւ՝ ժակետի փէշերի տակ, սկսում է քայլել). Իսկ այդ ջրվէժը... ձեզ է պատկանում...

ԳՐՈՒԳ. (Քիչ տատանւում է). Անկասկած...

ԻՍԻԴ. Դա ինձ զարմացնում է...

ՖԻՆԿ. Ինչո՞ւ. Այստեղ ի՞նչ կայ զարմանալու:

ԻՍԻԴ. Այսինքն ուզում եմ ասել... դո՞ք էք իրօք ջրվէժի տէրը...

ԳՐՈՒԳ. Իհարկէ... Ես պիտի ասեմ ձեզ...

ԻՍԻԴ. Որ դուք նրա տէրը չէք...

ԳՐՈՒԳ. Միենոյն է թէ մերն է... ծախել են խոստացել մեզ...

ԻՍԻԴ. Ո՞վ է խոստացել:

ԳՐՈՒԳ. Ջրվէժի սեփականատէրը...

ԻՍԻԴ. Ձէ որ դուք էիք նրա տէրը... (Ծաղրելով). Լսեցէք, իմ զաւակներս, դուք երկուսդ էլ պատուական մարդիկ էք... Իսկ ես... ես, անկասկած, մի տխմար... Ձեր առաջարկածը գուցէ շատ հետաքրքիր է... մանաւանդ շատ բարդ... Ես երբէք չեմ նետում մի այնպիսի ձեռնարկութեան մէջ, որ չը զիտեմ ինչ բան է նա... ուր, որտեղ է... և ում հետ պիտի բանակցեմ...

(Իսիդորը կանգնում է իր պատկերի առջեւ եւ ոտքերը իրարից հեռու, ձեռքերը՝ զրպաններում, զլուխը բարձրացրած, կեղծ հիպոմոնեքով դիտում է նրան... Գէմըրը հեղնոթիւն է արտայայտում... Գրուգ եւ Ֆինկ աւելի ու աւելի են շփոթւում: Իրար հետ հարցական հայեացքներ փոխանակում: Իսիդոր երկու ընթերցողները մերթ վառում, մերթ հանգչում է):

ԳՐՈՒԳ. Դուք մեզ հետ պիտի բանակցէք... բայց մենք ձեզանից ոչինչ չենք ուզում ծածկել... (Քիչ ծանծրացած). Դուք թոյլ չէք տալիս, որ խօսեմ... (Իսիդոր լուռ է):

ՖԻՆԿ. Դուք չարունակ ընդհատում էք... (Իսիդոր լուռ է): Մարդ չը գիտէ՝ ուր մնաց և որտեղից պիտի սկսէ:

ԳՐՈՒԳ. (Ֆինկին երկար նայելուց յետոյ). Նրա անունը՝ Ժողէֆ Բրիւնո...

ԻՍԻԴ. Խեղճ Բրիւնո... Ահա մի մարդ, որին բախտը չէ

ժպտում... (Գալիս նստում է սեղանի այն անկիւնի վրայ, ուր գտնուում է Ֆինկ): Դա լինէ տեսակ մարդ է:

ԳՐՈՒԳ. Կիսազկզջուկ... կիսաբուրժուա... Ո՛չ շատ խորամանկ... Սակայն շատ յամառ... Մեզ հետ ընկերակցելու ոչ մի առաջարկութիւն սկզբում նա չ'ընդունեց... Բայց միլլիոններ և միլլիոններ խոստացող շահերի մասին մենք այնքան խոսեցինք, սնդեկներ... որ նա վերջիվերջոյ վճռեց այդ ձեռնարկութիւնը զլուխ բերել ինքը միայնակ...

ԻՍԻԴ. Ուրեմն այդ Բրիւնօն շատ է հարուստ...

ԳՐՈՒԳ. Այդ ժամանակ նա մօտաւորապէս ունէր երեք հարիւր հազար Ֆրանկ... Մենք նրան ներկայացրինք նախազիծը և նախահաշիւը... նա ընդունեց, և աշխատանքը սկսուեց... Սակայն տասը կիլոմետր երկարութիւն ունեցող տուններից դեռ երեքը չը վերջացրած... այն երեք հարիւր հազարից այլևս ոչինչ չը մնաց... Նախահաշիւը կազմելիս մենք սխալուել էինք...

ԻՍԻԴ. (Կծու հեզնունքով)։ Օ՜հ...

Ֆինկ. Նախահաշիւներ կազմելիս մարդ յաճախ է սխալւում...

ԻՍԻԴ. Այո՛, այո՛... (Ետդրում է)։ Յետոյ:

(Խիղոր գլուխը բարձրացնում է եւ աւելի ուշադրութեամբ նայում Գրուգին եւ Ֆինկին):

ԳՐՈՒԳ. Բրիւնօն այնուհետև մեր տրամադրութեան տակ էր... Իր գրութիւնը նա իսկոյն հասկացաւ... Նրա հետ մի մասնաւոր պայմանագիր կապեցինք... որով մենք երկուսս յանձն էինք առնում շարունակել գործը... իրան մի որոշ գումար կամ մի փոքրիկ մաս տալով...

ԻՍԻԴ. Շատ լաւ... այդ Բրիւնօին ճանաչեցինք... խեղճ Բրիւնօ: Իսկ ջրվէժը... Այն հռչակաւոր ջրվէժը:

ԳՐՈՒԳ. (Ֆինկին երկար նայելուց յետոյ)։ Գրենտըլի մօտ... Սեան-Կարեքս է նա գտնւում...

ԻՍԻԴ. Սեան-Կարեքս... Սակայն, իմ զաւակներս... այդ Սեան-Կարեքսը ես ճանաչում եմ... Այո՛, այո՛... նա գտնւում է, եթէ չեմ սխալւում, դինուորական հողագոտու վրայ...

Ֆինկ. Դա աննշան, անկարկոր մանրամասնութիւն է...

ԻՍԻԴ. Ճիշտ: Դու կարծում ես... Իսկ այն զլխացաւանքը... հազար ու մի խոշընդոտները... որ քո առջև պիտի հանէ դինուորական վարչութիւնը... էսօր-էգուց գցելը... բերժումները... եւ տարիներ կուել, սրան-նրան դիմելուց, խնդրելուց, ժամանակ կորցնելուց, աջուձախ փողեր նետելուց յետոյ... դու վերջիվերջոյ կը լինես մի ամենաանել գրութեան մէջ, անկարող մի որեւէ բան անելու... եւ այս ամենը, իմ բարեկամ

Ֆինկ, դու անուանում ես աննշան մանրամասնութիւն... է՛հ, բարեկամս...

Ֆինկ. (Ծանրակշիռ կերպով). Դուք կարող էք համոզուած լինել, որ մի այսպիսի ձեռնարկութեան մէջ մենք կուրորէն չենք գործում... Մենք ազգեցիկ մարդիկ ունենք բարձր չըջաններում...

ԻՍԻԴ. Հա... ե... դրամադուրս, անկասկած, այլ չըջաններում... Հիանալի... ուրեմն ինձանում այլևս կարիք չ'ունէք: Շարունակեցէք, իմ զաւակներս... գործեցէք միայնակ... Այդպէս աւելի լաւ է... Մի բաժակ Պորտօ... 1804 թւականի... Այն խեղճ Բրիւնօի կենացը... (Նա բաժակները լցնում է. խմում են): Կարծեմ... դուք նրան այնքան էլ բարի չէք գտնում:

Ֆինկ. Ո՛չ, ոչ... ընդհակառակը:

ԳՐՈՒԳ. Սակայն, իմ սիրելի բարեկամ Լըշա... Մենք երբէք չենք ենթադրել, թէ դուք չէք կարող մեզ օգտակար լինել... Դա խենթութիւն կը լինէր...

ԻՍԻԴ. Դու նորից վերադառնում ես...

ԳՐՈՒԳ. Դուք ունէք մի լրագիր... այսինքն ժամանակակից կապիտալիզմի հօր և անկղ զէնքը...

Ֆինկ. Մեծ գործնական մարզկանց անհրաժեշտ լծակը...

ԳՐՈՒԳ. Դուք ունէք նոյնպէս...

ԻՍԻԴ. Այո՛, այո՛... Սակայն այդ ձեզ չէր արգելում, որ դուք կամենում էիք ինձ խաբել... (Գրուզ եւ Ֆինկ բողբոջում են): Դուք սխալ էք... ես անկեղծ... ուղղամիտ... առատաձեռն... չատ առատաձեռն մարդ եմ... ես խաղում եմ բաց թղթերով... սեղանի վրայ... Սակայն ես այդ խաղը չատ լաւ գիտեմ... Ես... ես Բրիւնօն չեմ... Այն խեղճ Բրիւնօն... Իմ ոսկրները աւելի կարծր են... կաշիս աւելի ամուր... Երբ որ ուզում եմ ինձ կուլ տալ... ես ցցւում եմ իմ ամբողջ լայնութեամբս... այդպիսով անկարող եմ լինում ինձ կլանել... Սա ձեր ապագայ բռնելիք ընթացքի համար էր... Այժմ... լսեցէք... Դառնանք ձեր գործին... Այդ ձեռնարկութեան մասին ես այն գիտեմ, ինչ որ դուք ինձ համառօտակի ասացիք... Հետևաբար այդ գործը... ինձ անձանօթ է... Իմ ցանկացածս էլ հէնց այն է... որ ես նրան խորապէս և լրջօրէն քննեմ, ուսումնասիրեմ... Նա կարող է վատ լինել... կարող է և լաւ լինել... ես կարծում եմ, որ նա լաւ գործ է... ես հոտառութիւն ունեմ... Միայն ինձ հարկաւոր են այնպիսի պայմաններ, որ վիճելի չը լինեն... այլ պէտք է կամ ընդունել կամ մերժել... Այլիս ոչինչ... Որովհետեւ ես իզուր վատնելու ժամանակ չ'ունեմ, այն էլ այնպիսի փոքրիկ մանկական խաբէութիւնների... փոքրիկ և ծաղրելի սրտնեղութիւնների հա-

մար, որ ոչ մի հետևանք չեն կարող ունենալ և որ ինձ միայն զգուշանք են պատճառում...

ԳՐՈՒԳ. Սակայն... ներողութիւն... ինչ սրտնեղութիւններ են...

ԻՍԻԴ. Դէ՛հ, այժմ բաւական է... Այդ ձեռնարկութիւնը որքան ծախք կը պահանջէ... հիմնարկութիւն... աշխատանք... չինութիւններ... մեքենաներ... բոլորը որքան էք հաշուում...

ՖԻՆԿ. Ութ միլիոն...

ԻՍԻԴ. Անպիտան... (Լռութիւն). Պիտի մտածեմ... (Լռութիւն). Ես յանձն եմ տանում գրամագչութիւն գտնել... որոշուած է... Սակայն միայն մի պայմանով, եթէ քննել, ուսումնասիրելուց յետոյ ես գտնեմ, որ այդ լաւ, ձեռնառու գործ է...

ԳՐՈՒԳ. Դա ինքնըստինքեան հասկանալի է:

ԻՍԻԴ. Բոլոր բանակցութիւնները զինուորական մինիստրութեան հետ եւ նոյնպէս ինձ վրայ եմ տանում... Խօսք եմ տալիս, որ այդ եւ մեծ ճարտիկութեամբ կը կատարեմ... (Քայլելով դադարեցնում է . Ահա իմ պահանջները՝ Նախ՝ Բրիւնօն, եւ նրան չեմ ճանաչում և չեմ էլ ուզում ճանաչել... Ինչ կամենաք, արեցէք...

ԳՐՈՒԳ. Ներողութիւն... Այն խեղճ մարդը...

ԻՍԻԴ. Հարկաւոր է կամ մարդասիրութեամբ զբաղուել, կամ գործով... Դուք գործերով էք զբաղուած, չէ... Այո... Շատ լաւ... Դուք նրան արգէն մի անգամ խաբել էք... այն խեղճ Բրիւնօն... Երկրորդ անգամ խաբելու համար կարիք չ'ունէք իմ օգնութեան... Բրիւնօն եւ ձեզ եմ թողնում... (Բարձրաձայն ծիծաղում է). Ի՞նչպէս, եւ ձեզ նախազգուշացնում եմ, որ ձեր ներկայացնելիք նախահաշիւը լուրջ ստուգութեան պիտի ենթարկուի... Ստանան տանի... եթէ յետոյ... նախահաշիւից աւելի ծախս կզաւ... այդ աւելորդը բոյսառապէս ձեր բաժնից պիտի վերցնուի...

(Գրուզ անհամբերութեամբ նշաններ է անում:—Ֆինկ ձեռքի մի շարժումներով նրան հանգստացնում է):

ՖԻՆԿ. Բայց նախ որոշենք՝ շահը ինչպէս պիտի բաժանենք...

ԻՍԻԴ. Մեր երկուսիս մէջ հաւասար...

ՖԻՆԿ. Դուք ուզում էք ասել՝ մեր երեքիս մէջ...

ԻՍԻԴ. Ի՞նչպէս թէ մեր երեքիս... Ո՞րտեղ եւ տեսնում, թէ մենք երեք ենք... (Գրուզին) Դու... (Ֆինկին) և դու... դա կ'անէ մէկ... Ես էլ մէկ... Մէկ և մէկ... անում է երկու... Երրորդն ուր է: Եւ եւ աւելացնում եմ, որ ձեռնարկութեան ֆինանսական վարչութիւնը բացառապէս... իմ ձեռքիս պիտի լինի... Գործի մէջ եւ կը մայնեմ,—եթէ օգտակար դատեմ,—և

մի քանի կոմբինացիաներ... դուք ոչ մի կերպ չէք կարող խառնուել... բայցի այն հարցերից, որ ձեր իրաւունքներին են վերաբերում... Սակայն հէնց հիմիկուանից ձեզ յայտնում եմ, որ նրբանք՝ ձեր իրաւունքները բաւական սահմանափակ կը լինեն...

ԳՐՈՒԳ. Ես ոչինչ չեմ հասկանում...

ԻՍԻԴ. Յետոյ կը հասկանաս... Թող վերջացնեմ... Քանի որ փող մէջ բերողը ես եմ... կարիք չունեմ ձեզ ասելու, որ կապալառուներից և վարպետներից գալիք կոմմիսիոնականներն ինձ եմ վերապահում...

ԳՐՈՒԳ. Ի՞նչ կոմմիսիոնական է:

ՖԻՆԿ. Կոմմիսիոնականներ չը կան...

ԻՍԻԴ. Է՛հ, իմ զաւակներս... եթէ կոմմիսիոնական չը կայ... դա կը նշանակէ իմ ձեռքով ինքս ինձ խաբել տալ տամ... Տարօրինակ բան կը լինէր այդ... սակայն ինձ չատ կը զարմացնէր...

ԳՐՈՒԳ. Իսկ մեր սոճիկները մասին դուք չը խօսեցիք...

ԻՍԻԴ. Ես սոճիկ չեմ կամենում...

ԳՐՈՒԳ. Սակայն դա ընդունուած սովորութիւն է...

ԻՍԻԴ. Ես երբէք չեմ համաձայնիր... Մենք ծառայողներ չենք հօ...

ՖԻՆԿ. Թոյլ տուէք... Թոյլ տուէք...

ԻՍԻԴ. Ո՛չ մի բան... ոչ մի բան...

ՖԻՆԿ. Իսկ իմ արտօնագիրը:

ԻՍԻԴ. (Ֆինիկին հեղձորէն նայելուց յետոյ). Քո արտօնագիրը...

Ի՞նչ արտօնագիր... Ա՛խ, հա... (Նրա ուսին խփելով). Ո՞ր ժամին ես դու մեկնում... Ժամը վեց և կէսին մի գնա՛ք կայ... Արագ-ընթաց, ամենալու գնացքն է, իմ բարեկամս...

ՖԻՆԿ. Այդպիսի պայմաններ մենք չենք կարող ընդունել...

ԳՐՈՒԳ. Դուք մեզ թալանում էք...

ՖԻՆԿ. Մեզ խողխողում էք...

ԳՐՈՒԳ. Դա անկարելի է... անկարելի...

ՖԻՆԿ. Հրէշաւոր... Ես յարգում եմ կապիտալի իրաւունքները... Սակայն մի գործի մէջ կապիտալը ամեն ինչ չէ... Իսկ իմ արտօնագիրը... (Շարժելով թղթի մի թերթ). Ձե՛ք որ իմ արտօնագիրը ես նոյնպէս իրաւունքներ ունի...

ԻՍԻԴ. (Միամտաբար). Դուք, իմ զաւակներս, ազատ էք...

Շատ լաւ... այստեղ վերջ դնենք... Երևակայենք, որ մենք ոչինչ չենք խօսել... Քի՛չ է պատահում, որ մի գործի մասին վիճում են, վիճում... և համաձայնութեան չեն գալիս... Սակայն այդ չէ կարող խզել սրտակից յարաբերութիւններ... (Փոքր լուծիւնից

յետոյ): Ամենից շատ նեղադողը... Բրիւնօն կը լինի... (Քայլում է ու քայլում): Խեղճ Բրիւնօ... Վերջապէս... այն խեղճ մարդը ինձ շատ է զբաղեցնում... Աստուած լիայ... ես շատ կը ցանկանայի դնալ այն կողմերը, մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարել... և Բրիւնօի հետ մի տեսակցութիւն ունենալ... Ի՞նչ կասէք, հը՞... Petit Tricolore-ի մէջ մի յօդուած այս վերնագրով «Interview Բրիւնօի հետ»... Հէ, հէ... Դա մի շատ արտաոռն է... և ծիծաղաշարժ բան կը լինէր, չէ... (Շփում է ձեռքերը, — Գրող եւ ֆինկ սարսափած են): Ընչա՞նչ և ճիշտ լաւ միտք է... Յետոյ... ինչո՞ւ... հէնց վաղուանից... չը գնամ և զինուորական մինիստրութիւնը... (Հանդիսաւոր կերպով): Այնտեղ ես ինձ զգում եմ այնպէս, ինչպէս իմ տանը-դրանը... Մինիստրի կարինաւոր ես գլխարկս ծածկած եմ մտնում... լաւ միտք, չէ... (Ջեպերը իրար է շփում), Հը՞, ինչ կ'ասէք... այս ծրագիրս հաւանում էք, թէ՞ ոչ:

ԳՐՈՒԳ. (ձնշուած). Շատ լաւ... մենք էլ հէնց քիչ մտածել ենք ցանկանում...

ԻՍԻԴ. Ինչո՞ւ համար... Քանի որ գործը ձեզ դուր չէ գալիս... Թողէք... Գիտէք ինչ... երբէք ոչ մի բան չ'անէք հակառակ ձեր կամքի...

(Ներս է գալիս մի սպասաւոր):

ՍՊԱՍ. Պարոն Քսավիէն եկել է...

ԻՍԻԴ. Իսկոյն... մի րոպէից յետոյ... (Սպասաւորը դուրս է գնում: — Գրողին եւ ֆինկին): Իմ դաւակներս, ես ձեզանից ներողութիւն եմ խնդրում... Որդուս հետ խօսելիք ունեմ...

(Գրող վերցնում է իր գլխարկը... ֆինկ սեղանի վրայից հաւաքում է իր թղթերը, գնում պորտֆելի մէջ եւ կողպում... Ապշած եւ շփոթուած պատրաստուած են հեռանալ):

ԳՐՈՒԳ. Շատ լաւ... այդպէս ուրեմն... մենք նորից կը մտածենք, կը խորհենք...

ԻՍԻԴ. Ինչպէս կամենաք...

ՖԻՆԿ. Նորից կը նայենք, կը փոխենք մի քանի թւեր... մի քանի հաշիւներ...

ԻՍԻԴ. Հա, այդպէս...

ՖԻՆԿ. Մենք ինչ ենք կասնում... համաձայնութեան դալ, չէ... Դուք ես ձեր կողմից...

ԻՍԻԴ. Օհ, դաւակներս... ինձ մի խնդրէք, որ ես խորհեմ... Իմ խորհելս ձեզ համար ոչ մի նշանակութիւն չի ունենալ... ընդհակառակը...

ՖԻՆԿ. (Գլուխը խոնարհած). Շատ լաւ... ահա...

ԻՍԻԴ. Դուք մինչև ժամի վեցը ժամանակ ունէք... Եթէ

ձեր խորհրդակցութիւններից յետոյ... դուք ցանկանաք ինձ հետ պայման կապել...

ՖԻՆԿ. Այժմ բոլորովին այլ կոմբինացիա է...

ԻՍԻԴ. Վերջապէս... եթէ դուք իմ առաջարկածներս ընդունէք... ժամանակաւոր փոքրիկ պայմանագիր կազմեցէք, միայն ճշտիւ... հիմնուելով իմ ձեզ յայտնած առաջարկութիւնների վրայ... ճշտօրէն, լսեմ էք... ճշտօրէն... Յետոյ... ընկերութեան պայմանագիրը կազմելիս մենք կը քննենք մի քանի լրացուցիչ պայմաններ... որոնց մասին դեռ չենք խօսել... (Գրուգ եւ Ֆինկ ցնցւում են)։ Չնչին, աննշան բաներ...

ԳՐՈՒԳ. (Ապշած եւ տխրութեամբ կօշիկների ծայրերին նայելով)։ Այդպէս ուրեմն... Մենք գնանք նորից քննենք...

ՖԻՆԿ. (Մեռելով դէմքով)։ Իհարկէ... անկասկած...

ԳՐՈՒԳ. (Նոյնպէս մեռելով դէմքով)։ Մենք էլ հէնց այդ էինք ցանկանում... չէ...

ՖԻՆԿ. Գտնել մի լաւագոյն համբա... Դժուար է...

ԻՍԻԴ. (Ուղեկցում է նրանց մինչեւ դուռը. բարեկամաբար նրանց ուսերին խփելով՝ քաջալերում է)։ Լաւ... լաւ... Ի՞նչ տարօրինակ պարզամիտ մարդիք էք եղել դուք... Ես ձեզ հարստացնեմ... և դուք այդպէս յուղարկաւորութեան ղէմքեր ունենաք... Աշխոյժ... ուրախ եղէք... սատանան տանի... Ա՛յ... ա՛յ... իմ զաւակներս... (Գրուգ եւ Ֆինկ դուրս են գնում)։ Ժամը վեց և կէսին... չը մոռանաք... հա...

(Ներս է գալիս Բասովին)։

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ՔՍԱՎԻԷ.

(Քսավիէ աւտոմոբիլիստի վայելչագեղ հագուստով։—Բարձրահասակ, բարակ, դէմքը արդէն քիչ թառամած։ Շարժուածքները, ձեւերը՝ դանդաղ)։

ԻՍԻԴ. (Զաւազանց ցնծութեամբ, գրկաբաց)։ Օ՛հ, վերջապէս... ահա հնոցպանը...

ՔՍԱՎ. Բարեւ, հայր...

(Անփոյժ կերպով պարզում է նրան երկու մատը)։

ԻՍԻԴ. Հէնց միմիայն այս ես տալիս... Հը՞... Միթէ հայրիկին չես համբուրիլ... քո ձեռք հայրիկին...

ՔՍԱՎ. Եթէ կամենաս...

(Համբուրում է հօրը)։

ԻՍԻԴ. Ուրեմն սա այնքան էլ չիկ բան չէ... Միթէ՞ ձեր Epatant ընկերութեան մէջ այդ արգելուած է... Ինձ նայիր... մի տեսնեմ... Ինչո՞ւ է քո գէմբը այդպէս տխուր... Ի՞նչ է, ձանձրացած ես... հա...:

ՔՍԱՎ. (Անորոշաբար). Օ՛հ...

ԻՍԻԴ. Կանայք... Սրտի գործեր են, անշուշտ...

ՔՍԱՎ. Օ՛հ, հէ... Սրտի գործեր... Պաղուց է, որ եսնը-բանցից կշտացիլ եմ...

ԻՍԻԴ. Այ դու իմ փոքրիկ հնոցպանս... Փողի գործեր են...

ՔՍԱՎ. Աւելի...

ԻՍԻԴ. Օ՛հ... Մեծ կորուստ...

ՔՍԱՎ. Բաւականին մեծ...

ԻՍԻԴ. Օտտենդէում:

ՔՍԱՎ. Այո, Օտտենդէում...

ԻՍԻԴ. Պատմիր, տեսնեմ... Մի բաժակ Պորտօ:

ՔՍԱՎ. Merci... Դու գիտես, որ ես ջուր եմ միայն խը-մում...

ԻՍԻԴ. (Նստում է). Դէհ, ասա...

ՔՍԱՎ. (Նոյնպէս նստելով). Երկու հարիւր հազար ֆրանկ...

ԻՍԻԴ. (Յնցուելով). Ի՞նչ ասացիր:

ՔՍԱՎ. (Շեշտելով իւրաքանչիւր բառ). Երկու հարիւր հազար ֆրանկ...

ԻՍԻԴ. Ես չառ լաւ լսեցի... Թշուառական... (Ապշած նա-յում է իր որդուն). Քո պատմութիւնները կարճ են... բայց գե-ղեցիկ...

ՔՍԱՎ. Գեղեցիկ... վերջապէս, ահա... (Փոքր լուծիւն):

ԻՍԻԴ. Սակայն երկու հարիւր հազար ֆրանկը... չէ՞ որ... մի գումար է...

ՔՍԱՎ. Օ՛հ... քեզ համար...

ԻՍԻԴ. Ի՞նչպէս թէ ինձ համար... Դու բաւական տարօ-րինակ ես... Սակայն կարծում ես, թէ երկու հարիւր հազար ֆրանկը միշտ այնտեղ՝ ձեռքիս տակ պատրաստ է... գոնէ նա-խազգուշացնել էր հարկաւոր... Սատանան չը տանէ...

ՔՍԱՎ. Վաղը մի գործ կ'ունենաս... և չես էլ նկատիլ այդ պակասը...

ԻՍԻԴ. Գործ... գործ... հեշտ է ասել... Զի՞ կարելի մի կերպ ուղղել...

ՔՍԱՎ. Անհնար է... Պատւի պարտք է...

ԻՍԻԴ. Պատիւ... պատիւ... Սատանան տանէ այդ պատի-ւը... Ուր փող կայ... այնտեղ պատիւ չը կայ...

ՔՍԱՎ. Միայն ո՛չ իմ շրջանում...

ԻՍԻԴ. Իր շրջանում... Հիանալի է սրա ասածը... Ձառմանալի տղայ է այս լակտոր... Ուրեմն անկարելի է:

ՔՍԱՎ. (Հակիրճ կերպով). Այո, անկարելի է...

ԻՍԻԴ. Բոլորովին անկարելի:

ՔՍԱՎ. (Նոյն կերպով). Բոլորովին անկարելի...

ԻՍԻԴ. Այո... (Մտախոհ—փոքրիկ լուռություն). Լսիր... ես համաձայն եմ այդ երկու հարկեր հաղար ֆրանկն էլ քեզ տալ... Միայն... դու պիտի նորից յետ տանես...

ՔՍԱՎ. Եթե կարողանամ...

ԻՍԻԴ. Կարող ես... Սակայն զուլսս որաքում է... առաւօտեանից սկսած այնքան եմ գործերով զբաղուել... որ զուլսս ճարում է... (կանգնելով) Ես դեռ միւսն է գործ էլ այն անպիտան Պորսելէի հետ ունեմ... Նախաճաշիկից յետոյ կը խօսենք...

ՔՍԱՎ. Ուրեմն դա իմ գեւերտը կը լինի:

ԻՍԻԴ. (Շոյելով իր որդու այտը). Բայց ե այնպէս նազելի ես... Ե՛կ գնանք, ձիերս տես... (Հանում է ժամացոյցը). Դեռ ժամանակ ունենք...

ՔՍԱՎ. Գիտես, որ ես ժամը վեցին Պարիզ պիտի լինեմ:

ԻՍԻԴ. Եւ կը լինես... Ո՛չ մի խօսք, մանաւանդ մօրդ...

ՔՍԱՎ. Սակայն...

ԻՍԻԴ. Իր գանդաւաններով... Իր լաց ու կոծով... նա տաան եւ հինգ օր իմ գլուխը կը տանէ...

ՔՍԱՎ. Մայրիկը նոյնն է մնում... միշտ ձանձրացնող...

ԻՍԻԴ. Օ՛հ, իմ սիրելիս...

(Իրար հետ ձեւանցուկ գնում են դէպի դուռը):

ՔՍԱՎ. Իսկ Տարտըլետ Կաբրին... ինչպէս է...

ԻՍԻԴ. (Համոզմունքով) Հրեշտակ է... հրեշտակ...

ՔՍԱՎ. Օ՛հ, հայրիկ... Բո հասակում...

ԻՍԻԴ. Ի՞նչ արած... Ես քեզ նման չեմ... Ես աւելի ջանքի սիրտ ունեմ... ինձ հարկաւոր է զգացմունք... սէր...

ՔՍԱՎ. Իդէալ...

ԻՍԻԴ. Այո, ե իդէալ... Գործերից դա մարդուն դադար, հանգստութիւն է տալիս...

(Նրանք ծիծաղելով գնում, չքանում են):

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Միեւնոյն օրը, նախաճաշիկից յետոյ:

Իսիդոր Լըշայի կաբինետը:

Խորքում մի հոյակապ վառարան, որի ճոխ տախտակաքանդակի մէջ դրած է մի հին պատկեր: Աջ եւ ձախ կողմի պատերը ծածկուած են տասն եւ վեցերորդ դարու շքեղ գորգերով: Աջ կողմը մի շքեղակերտ դուռ տանում է դէպի սալոն-ընդունարանները. մի այլ փոքրիկ դուռ՝ դէպի appartements intimes... Ձախ կողմը՝ մի մեծ, լայն ապակեպատ դուռ, որ տեղից երեւում են պարտէզը եւ արեւի ճառագայթներով լուսաւորուած երկինքը:

Կաբինետի մէջ տեղը՝ Լիւզովիկոս XIV-ի ստիլով շինած մի ահագին գրասեղան, ծանրաբեռնուած գեղարուեստական իրեղէններով եւ թղթերով... ճոխ կահ-կարասիք... խառն՝ հնագոյն եւ մոդերն, կաշուէ ծածկ աթոռներ...

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԻՍԻԴՈՐ, ՔՍԱՎԻԷ.

(Վարագոյրը քայուելիս Իսիդորը գրասեղանի առջեւ նստած՝ չեկ է դրում: Քսավիէ՝ վառարանին յենուած, սիգար ծխելով, մի լրագիր է աչքի անցընում:—Մի վայրկեան լուռ լինել է տիրում):

ԻՍԻԴ. (Զեկը տետրից կտրելով եւ տալով Քսավիէին). Ահա...

ՔՍԱՎ. (Զեկը վերցնում է՝ քննելով). Merci...

(Նա չեկը առանց շտապելու ծալում, դնում է իր պորտֆելում):

ԻՍԻԴ. Սա կայն... իմ տղաս... գիտես ինչ... Այսպիսի փոքրիկ պարզեաբաշխումների բեղ մի սովորեցնել, հա... Վերջ-ի վերջոյ... քո հայրիկի գանձարանը անկարող կը լինի նրանց բաւականութիւն տալ...

ՔՍԱՎ. (Ժպտալով եւ զլուխը քիչ շարժելով). Օ՛հ...

ԻՍԻԴ. Ո՛չ, ո՛չ... ես քեզ խնդրում եմ... (Փոքր լուռութիւն, որի ժամանակ Խսիկը խորհում է). Ասա ինձ... Քո յարաբերութիւնները երիտասարդ Բրազարի հետ դարձեալ լաւ են:

ՔՍԱՎ. Ո՞ր Բրազարի:

ԻՍԻԴ. Գենեբալի որդի...

ՔՍԱՎ. Հանրիբի հետ... (Անվտոյմ). Այո՞... Օստենդէից այս գիշեր մենք միասին վերադարձանք...

ԻՍԻԴ. Ի՞նչպիսի տղայ է:

ՔՍԱՎ. Ինչպէս բոլորն են... Սակայն չիկ, վայելուչ... երիտասարդ է...

ԻՍԻԴ. Բրազարները գրոշ չ'ունեն, կարծեմ...

ՔՍԱՎ. Այնքան էլ հարուստ չեն...

ԻՍԻԴ. Սակայն... նրանք շատ փարթամ կեանք են վարում...

ՔՍԱՎ. Փարթամ կեանք... Այո՞... պատշաճ կեանք... Ներանք չիկ, աղա մարդիկ են...

ԻՍԻԴ. Չէ որ նրանք գրոշ չ'ունեն...

ՔՍԱՎ. Դա մի պատճառ չէ...

ԻՍԻԴ. Ընդհակառակը... (Լուռութիւն). Ես կամենում եմ քեզ մի բան ասել... Ինձ շատ լաւ յայտնի է, որ զինուորական մի-նիստը մտադիր է իր վարչութեան մէջ մի քանի փոփոխութիւններ անել... Գենեբալ Բրազար շտաբի շեֆ է նշանակուում... Դա վճռուած և գրեթէ իրագործուած հարց է...

ՔՍԱՎ. Ի՞նչ. Ա՛հ... Հանրիբ ինձ ոչինչ չ'ասաց...

ԻՍԻԴ. Սակայն... ես գիտեմ...

ՔՍԱՎ. Աւելի լաւ... նրանց գործերը քիչ կարգի կ'ընկնեն...

ԻՍԻԴ. Գիտես ինչ... Մի ձեռնարկութիւն կայ, որի առթիւ ես այժմ բանակցում եմ այն երկու ապուշների հետ, որ դու տեսար նախաճաշիկին...

ՔՍԱՎ. Դատող, ընդունակ մարդիկ էին երևում... բայց քէֆները՝ քիչ վատ, կոտրուած...

ԻՍԻԴ. Անշուշտ վատ կը լինի... (Զեռքի շարժումով իբր թէ պտուտակ է ամրացնում: Քսավիէն ծիծաղում է). Մի լաւ առաջնորդ է հարկաւոր, որ ինձ ներկայացնէ, մտերմացնէ գենեբալ Բրազարի հետ... Եթէ իմ քեզ հաղորդած տեղեկութիւնները ճիշտ լինեն... իմացած եղբի... որ այստեղ քսան միլիոնի գործ կայ... (Քսավիէ ողորկուած սուլում է). Այո, այո... իմ սիրելիս... ճիշտ և ճիշտ քսան միլիոն... հեշտութեամբ...

ՔՍԱՎ. Սատանան գիտէ... Դու քո ժամանակը իղճեր չես կորցնում...

ԻՍԻԴ. Գուցէ աւելի... Գուցէ այդ ձևանարկութեամբ, իմ աղաս, ես կարող լինեմ իմ ունեցածը կրկնապատկել... (Քսավին լսում է սաստիկ հետաքրքրութեամբ)։ Ինչ գնով էլ լինի՝ հարկաւոր է Բրազարին մեր ձեռքը դրել...

ՔՍԱՎ. Բրազարին... Չէ որ նրա հօրաքրոջ որդի Պորսեն լէն քեզ ծանօթ, քո ձեռքին է... Նրանք միմեանց հետ չատ մտերիմ բարեկամներ են...

ԻՍԻԴ. Գիտեմ... Սակայն ես կ'ուզէի աւելի մօտիկ անձնաւորութիւն... Բացի այդ... (Լռութիւն)։ Ես դեռ չը գիտեմ, թէ Պորսելէի գործը ինչպէս պիտի վերջացնեմ... (Լռութիւն)։ Արդեօք քո բարեկամ Հանրին եր հօր վրայ ազդեցութիւն ունի...

ՔՍԱՎ. Ես այդ չը գիտեմ... Հօր վրայ ազդել միշտ կարելի է, եթէ մարդ գործը լաւ տանի...

ԻՍԻԴ. Ահ, ահ... Այդ, ամենը իմ հասցէին է ուղղուած...

ՔՍԱՎ. Օհ, քո... Դու միայն այն ես անում, ինչ որ դու ես ցանկանում...

ԻՍԻԴ. (Հայրախնամ մտերմութեամբ)։ Այո... Այո... Ի՞նչ կայ, երկու հարիւր հազարը դրպանումը դրած... այժմ ինձ կարող ես ծաղրել... Չար անպիտան... Վերջապէս... Ինչ ես մտածում երիտասարդ Հանրիի նկատմամբ...

ՔՍԱՎ. Տեսնեմ...

ԻՍԻԴ. Գիտես ինչ, եմ սիրելի զաւակս... դու վաղը նրան բեր խմրագրատուն... Երեքս միասին կը նախաճաշենք... և կը խօսենք...

ՔՍԱՎ. (Քիչ լռութիւնից յետոյ)։ Դա... քիչ դժուար է...

ԻՍԻԴ. Խնչպէս...

ՔՍԱՎ. Հանրին, որքան ինձ յայտնի է, պարզ, հասարակ, մատչելի տղայ է... սակայն խոհեմ... սաստիկ ձեապաշտ։

ԻՍԻԴ. Ես գործ կը դնեմ, ինչ ձեախանութիւն էլ նա կամենայ...

ՔՍԱՎ. Գիտես ինչ... ես երկիւղ եմ կրում... որ նա գուցէ չը ցանկանայ... քեզ հետ... քո մօտ տեսակցութիւն ունենալ...

ԻՍԻԴ. Ինչո՞ւ...

ՔՍԱՎ. Որովհետեւ... որովհետեւ... դու քիչ տաք դուրս... այլանդակ զաղափարների տէր մարդ ես...

ԻՍԻԴ. Ի՞նչպէս... Ես... այլանդակ զաղափարների տէր... Ի՞նչ ես յիմար-յիմար խօսում...

ՔՍԱՎ. Ես չառ լաւ գիտեմ... Ինչեր են ամենուրեք խօսում... քո նկատմամբ... Ամեն օր մեր ժողովարանում... պատմութիւններ են... որ լսում եմ քո մասին...

ԻՍԻԴ. (Հրճուանքով). Պատմութիւններ... լաւ է, օրհնուած... Սիրային արկածներ, անշուշտ...

ՔՍԱՎ. Ո՛չ բոլորովին այդպէս... (Անորոշաբար)... պատմութիւններ... Թէն ինձ համար դա նշանակութիւն չունի... Ներանք ինձ միայն դարմայնում են... Սակայն մարդիկ կան, որոնց նրանք ամօթ են պատճառում...

ԻՍԻԴ. Ապուշներ... Շատ իմ հարկաւորն է...

ՔՍԱՎ. Մի ուրիշ միջոց կայ... Ես չառ մօտ, սերտ յարաբերութիւն ունեմ Հանրիի սիրուհու հետ... (Շեշտելով). Շատ մօտ...

ԻՍԱԴ. Ո՞վ է դա:

ՔՍԱՎ. Մի կին, որին դու չես ճանաչում... Շատ ճարպիկ... չառ գաղտնապահ... քիչ խորհրդաւոր կին, որ իր սիրականի վրայ մեծ ազդեցութիւն ունի...

ԻՍԻԴ. (Ուշադրութեամբ). Ա՛հ...

ՔՍԱՎ. Ռուս կին է, որը սակայն երբեմն գերմանուհի... երբեմն իտալուհի է... Հասկանո՞ւմ ես:

ԻՍԻԴ. (Քիչ ժամանակ մտածելուց յետոյ). Ես այդ չկողային չեմ պատկանում... Կանայք չառ սիրուն բան են... բայց արտաքոյ սիրոյ... ես նրանցից զգուշանում, խոյս եմ տալիս՝ որպէս ժանտախտից... Ո՛չ... ո՛չ... գործերի մէջ խառնել կանայց... երբէք...

ՔՍԱՎ. Դու չարաչար սխալուում ես... Իրապէս նրանք հէնց միմիայն դրա համար են պիտանի...

ԻՍԻԴ. Լքեցե՛ք...

ՔՍԱՎ. (Շատ սառը խտուեցմամբ). Թէկուզ հէնց դա...

(Լռութիւն):

ԻՍԻԴ. (Հիացած նայում է որդու վրայ). Օրհնուած, խորամանկ փոքրիկս... (Նորից խորճելուց յետոյ). Ո՛չ... ո՛չ... Այդ գործը ես ինքս միայնակ կ'անեմ...

ՔՍԱՎ. Ուրեմն դու ինձ չես վստահանում...

ԻՍԻԴ. Ի՛նչ յիմարն ես... Եթէ ես բեղ չը վստահանայի... միթէ քեզ կը խնդրէի ներկայ լինել այն տեսակցութեան...

(Ներս է գալիս մի ծառայ):

ԾԱՍ. Մարկիզ դը-Պորսելէն հարցնում է, կարո՞ղ էք արդեօք դուք նրան ընդունել...

ԻՍԻԴ. Ժամի երկուսն է... Ի՛նչ ճշտապահն է եղել պարոն մարկիզը... (Ծառային). Խնդրիր պարոն զը-Պորսելէին մի

քանի վայրկեան սպասել... (Քսավիէին). Կ'ուզես դու նրան տեսնել:

ՔՍԱՎ. Բնաւ չէ... (Իսիդոր ծառային նշան է անում. ծառան դուրս է գնում):

ԻՍԻԴ. Ես բոլորովին չեմ ցատում, որ պարոն մարկիզը նախասնեակում քիչ պիտի սպասէ... Բայց և այնպէս որքան ձշտապահ է...

ՔՍԱՎ. Ճշտութիւնը՝ իրանց ունեցածը թղթախաղում վատնածների քաղաքավարութիւնն է...

ԻՍԻԴ. Խելօք լակոտ ես, խելօք... (Նա տեղից բարձրանում է). Ուրեմն... այդպէս... վճռուած է... վաղը ժամը մէկին դու ներան կը բերես... չէ...

ՔՍԱՎ. Կ'աշխատեմ...

ԻՍԻԴ. Կ'աշխատեմ—մ'աշխատեմ չը կայ... Պիտի բերես...

ՔՍԱՎ. (Քիչ լուծիւնից յետոյ սառն անամոթեմեամբ). Ո՞րքան ես ինձ տալիս:

ԻՍԻԴ. Ի՞նչ... լինչ...

ՔՍԱՎ. Անշուշտ... Քանի որ դու այս ձեռնարկութեամբ կրկնապատկում ես քո հարստութիւնը, կարող ես կրկնապատկել և քո առատաձեռնութիւնը... Միթէ les affaires ne sont plus affaires...

ԻՍԻԴ. Դա այնքան էլ լաւ չէ... Դու ինձ ցաւ ես պատճառում... Միթէ ես երբեք քեզ հետ հաշիւների մէջ եմ մըտել...

ՔՍԱՎ. Ուրեմն... վաղը...

ԻՍԻԴ. Հնա, այդպէս, է... Դէհ, համբուրի ինձ... (Նրանք համբուրում են)... Իսկ քո աւտոմոբիլը... լինչպէս է, գոհ ես...

ՔՍԱՎ. Հիանալի է...

ԻՍԻԴ. Զգոյշ եղիր... իմ տղաս... Շատ էլ արագ մի քրջիր...

ՔՍԱՎ. Էհ... ժամը յիսուն և հինգ կիլոմետր...

ԻՍԻԴ. Այդ շատ շատ է... Օհ, այդ մեքենաները ես չը սիրեցի... Բայց և այնպէս նախքան մեկնելը գնա մօրդ, քրոջդ տես, համբուրիր...

ՔՍԱՎ. Եթէ յանկարծ այս երեկոյ հանդիպեմ քո հրեշտակին... նրան էլ պիտի համբուրեմ...

ԻՍԻԴ. Լաւ... լաւ... Հար անպիտան... պատւիր քո ծեր հօրը... Հնա, նրան ես ոչ մի խօսք այն երկու հարիւր հազարի մասին...

ՔՍԱՎ. (Ծիծաղելով). Օհ, հայրիկ...

ԻՍԻԴ. Յտեցութիւն, իմ տղաս... մինչեւ... վաղը:

ՔՍԱՎ. Մինչև վաղը...

(Քասավին դուրս է գնում):

(Իսիդոր մտախոհ՝ մի քանի բառեր սենեակում քայլում է... Յետոյ մօտենալով գրասեղանին՝ մի գործ է թերթում... Ապա զանգը հնչեցնում... Ծառայի ուղեկցումեամբ ներս է դալիս մարկիզը-Պորսելին):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ՄԱՐԿԻԶ ԴԸ ՊՈՐՍԵԼԷ.

ԻՍԻԴ. (Մարկիզի առաջը գնալով). Պարոն մարկիզ... պատիւ ունեմ...

ՄԱՐԿ. (Հագուստը, շարժուածքները, ձեւերը՝ շատ վայելուչ են գեղեցիկ). Սիրելի պարոն Լըշա...

(Միմանց բարեւում են):

ԻՍԻԴ. Ներեցէք, որ ձեզ քիչ սպասել տուի...

ՄԱՐԿ. Ոչինչ... ոչինչ...

ԻՍԻԴ. (Մի բազկաթոռ առաջ քաշելով). Նստեցէք, խնդրեմ:

ՄԱՐԿ. Merci.

ԻՍԻԴ. Մի սիգար... (Մարկիզը ձեռքի շարժուածքով մերժում է).

Մի բաժակ պորտվին...

ՄԱՐԿ. Merci... առաւել ևս ոչ...

ԻՍԻԴ. (Նստելով գրասեղանի առջեւ). Օ՛հ, պարոն մարկիզ... վաղուց է, որ ես պատիւ չեմ ունեցել ձեզ ընդունելու... Հարեան... լաւ յարաբերութիւնների մէջ լինելով հանդերձ... սակայն միմեանց հետ երբէք չենք տեսնում... տարօրինակ բան է... Երեք տարին հազիւ մի անգամ...

ՄԱՐԿ. Ինչ արած... Հազար ու մի արգելքներ... հազար ու մի զբաղմունքներ... Մարդ այլևս իր ժամանակի տէրը չէ...

ԻՍԻԴ. Ո՛ւմ էք այդ ասում...

ՄԱՐԿ. Յետոյ... Վերջին ժամանակներս որդուս վերադարձովն էի սաստիկ զբաղուած...

ԻՍԻԴ. Առանց ձեականութեան... նրան ևս ձեզ հետ բերէք... Ես շատ բախտաւոր կը լինէի՝ տեսնելով ինձ մօտ քաջարի դիմնական ճամբորդ-հետապօտողին...

ՄԱՐԿ. Այժմ նա Պերիզոր՝ իմ մօրաքոյր Սոմբրեոզի մօտ է...

ԻՍԻԴ. Ա՛հ... (Առտնալով). Իր ճանապարհորդութիւնից դո՛հ է... Յոգնածութիւն... ջերմ հօ չ'ունի:

ՄԱՐԿ. Ամենեին... Տոնկինով սղեորուած է... Որսորդութեան համար մի հիանալի երկիր է,—ասում է նա...

ԻՍԻԴ. Օ՜հ...

ՄԱՐԿ. Այ՛ն... Մանաւանդ սիրամարդի որսը շատ հետաքրքիր է:

ԻՍԻԴ. Օ՜հ, ճհ...

ՄԱՐԿ. Թէն վտանգաւոր... սակայն առաւել ևս զուարճալի...

ԻՍԻԴ. Այնտեղի սիրամարդերը... ուրեմն... արիւնարբու են...

ՄԱՐԿ. Անկասկած, ո՛չ սիրամարդերը... այլ վագրերը... որովհետեւ սիրամարդերը գտնուում են անտառների այն մասերում, ուր վագրեր են յաճախում... Տոնկին, ուր եղջերու կայ... այնտեղ կայ և վագր... և ուր վագր... այնտեղ՝ սիրամարդ...

ԻՍԻԴ. Այդ շատ հետաքրքիր է...

ՄԱՐԿ. Չէ... Բոքերտը հստատացնում է, որ սիրամարդերի որսը շատ հիմնալի է...

ԻՍԻԴ. Ես կարծում եմ... Լաւ բան է ճանապարհորդութիւնը... ճանապարհորդութիւնն է միայն, որ զարգացնում է երիտասարդի միտքը...

ՄԱՐԿ. Յետոյ... դա ժամանակ անցկացնելու համար լաւ միջոց է... Հնդկա-Չինաստանի փչոտքը անցնելն աւելի քիչ վտանգաւոր է, քան Պարիզի բուդուարները...

ԻՍԻԴ. Դուք շատ իրաւացի էք... որովհետեւ ուր բուդուար կայ... այնտեղ և կայ կին... և ուր կին կայ... այնտեղ կայ...

ՄԱՐԿ. Աղաւնեակ...

(Նրանք ծիծաղում են):

ԻՍԻԴ. Կամ ձագար... (Ծիծաղում են). Ես աղաւնեակից պակաս վտանգաւոր է:

(Երկուսն էլ այժմ աւելի զոհ, աւելի վստահ են երեւում):

ՄԱՐԿ. Իրօք... Իմ սիրելի պարոն Լըշա... ձեզ տեսնելովս ես ինձ շատ բախտաւոր եմ գտում... (Լռութիւն). շատ բախտաւոր... (Լռութիւն). Բացի բաւականութիւնից, որ ինձ պատճառում է այս այցելութիւնը...

ԻՍԻԴ. Կարող էք ասել «մեղ»... պարոն մարկիզ...

ՄԱՐԿ. (Ձեռքի շարժումով շնորհակալութիւն է յայտնում). Ես կը յանկանայի ձեզ հետ մի կարեւոր հարցի մասին խօսել... շատ հարկաւոր և անցատաձգելի...

ԻՍԻԴ. Ես բոլորովին, պարոն մարկիզ, ձեր տրամադրութեան տակ եմ գտնուում...

ՄԱՐԿ. Ահա թէ ինչ... (Համում է ծնունդները). Մըլոնի փայտավաճառ Գալլիէի... հաշիւների կանոնաւորումը...

ԻՍԻԴ. Գիտեմ... գիտեմ...

ՄԱՐԿ. Առաջ չի ընթանում... Նոտարը ինձ գրում է, որ
ևս դժբախտաբար շատ բան չեմ կարող սղասել...

ԻՍԻԴ. Ո՛չ մի բան, պարոն մարկիզ...

ՄԱՐԿ. Օ՛հ... Դուք ես նոյն կարծիքի եք...

ԻՍԻԴ. Այո...

ՄԱՐԿ. Ես հենց գրանից էի երկիւղ կրում... (Վռոթիւն).
ինձ համար դա մի մեծ կորուստ է... Դա ինձ շատ նեղն է գը-
ցում... Մուրհակներին պայմանաժամը լրանում է... Իսկ ձեռ-
քիս հարկաւոր գումար չը կայ... Այո... Վերջապէս... ես շատ
նեղն եմ ընկնում, շատ նեղը... Ուստի ես եկել, ձեզանից խն-
դրում եմ, որ ինձ երկու հարիւր հազար ֆրանկ նոր պարաք
տաք...

ԻՍԻԴ. (Շատ հանդիստ կերպով). Տեսնե՛ք... պարոն մարկիզ...
տեսնե՛ք...

ՄԱՐԿ. Դուք չէք կարող երեւակայել, թէ ինձ, սիրելի պա-
րոն Լըշա, որքան կը բախտաւորացնէք...

ԻՍԻԴ. Ահա... պատահաբար հենց ձեր գործն էլ այստեղ
է... (Բարի դէմքով). Տեսնե՛ք... (Արագութեամբ գործը թերթում է)...
Չորս օրիցայիս երկ-երկու հարիւր հազար ֆրանկանոց... մի
ուրիշը՝ չորս հարիւր հազար... դա կ'անէ մէկ միլլիոն երկու
հարիւր հազար... Երկու տարուայ հինգ տոկոս շահն էլ վրան
աւելացնելով... կը ստանանք մէկ միլլիոն երեք հարիւր քսան
հազար... Ճիշտ է, չէ...

ՄԱՐԿ. Բոլորովին ճիշտ...

ԻՍԻԴ. Այո, այո... (Գլուխը դէպի առաստաղը քարճաքցած՝ ըստ
երեւոյթին մտքով հաշիւներ է անում). Պաբոն մարկիզ... ես շատ
ցաւում եմ... սակայն այս անգամ անկարելի է...

ՄԱՐԿ. Դուք մերժում եք...

ԻՍԻԴ. Շատ ցաւում եմ... բայց մերժում եմ...

ՄԱՐԿ. Սակայն... ես բերել եմ ձեր բոլոր ցանկացած
գրաւականները...

ԻՍԻԴ. (Երեսը ծումելով). Դարձեալ անշարժ կալուածների
գրաւականներ...

ՄԱՐԿ. Դրանից աւելի լաւ գրաւական:

ԻՍԻԴ. Սակայն ձեր հողերը ծանրաբեռնուած են իրանց
արժէքից աւելի գրաւականներով...

ՄԱՐԿ. Ներողութիւն, այդպէս չէ...

ԻՍԻԴ. Ձեր հողերը վատ են մշակում... վատ պահում...
Ագարակները՝ խաբիւով գրութեան մէջ... անառնները՝ կարը-
տած, թալանած... Եթէ ես նրանցից մի միլլիոն հանեմ... շատ
լաւ կը լինի...

ՄԱՐԿ. (վառուած). Ի՞նչպէս թէ հանէք...

ԻՍԻԴ. Իհարկէ...

(Փոքր լուռութիւն):

ՄԱՐԿ. Սակայն... պարոն... ես կարող եմ ձեզ այլ գրաւակաճներ տալ... Նախ... իմ... ագնութիւնը...

ԻՍԻԴ. Ես այդ գնահատում... յարգանքս եմ մատուցանում... Սակայն գործերի մէջ մենք նրան չենք ճանաչում...

ՄԱՐԿ. Բացի այդ... իմ հօրաքոյր Սոմերեօզի ժառանգութիւնից ես մաս ունեմ...

ԻՍԻԴ. Է՛հ...

ՄԱՐԿ. (Շեշտելով). Իմ հօրաքոյրս ութսուն երեք տարեկան է...

ԻՍԻԴ. Օ՛հ... Մեր այս տենդային ժամանակներում ապագայ ժառանգութիւնների մասին խօսք անգամ չի կարող լինել...

ՄԱՐԿ. (Բիշ ցնշուած, սակայն զոռողութեամբ). Շատ լաւ, պարոն... (Նա տեղից բարձրանում է)... Ինձ միայն մնում է ներողութիւն խնդրել...

ԻՍԻԴ. Պարոն... մարկիդ... խնդրեմ, խնդրեմ... նստեցէք...

ՄԱՐԿ. Բայց...

ԻՍԻԴ. Խնդրում եմ... (Մարկիդը նստում է—Լուռութիւն). Պարոն մարկիդ... ես ձեզ սիրում եմ... Դուք ինձ շատ դուր էք գալիս... շատ... Ես կը ցանկանայի այդ աղէտալի դրութիւնից ձեզ ազատել...

ՄԱՐԿ. Աղէտալի... Օ՛հ...

ԻՍԻԴ. Պարզ ասե՛ք... կործանումից...

ՄԱՐԿ. Օ՛խ, ճիշտ... Շատ էք, իմ սիրելի պարոնս, շտապում...

ԻՍԻԴ. Աւելորդ է... պարոն մարկիդ... ինձ հետ կեղծել... ձեր դրութիւնը ինձ քաջ յայտնի է... աւելի լաւ, քան դուք ինքներդ գիտէք...

ՄԱՐԿ. Իմ դրութիւնը... այժմ... ինչպէս դուք էք ասում, փառաւոր չէ... Սակայն նա և անյոյս էլ չէ...

ԻՍԻԴ. Այո՛... պարոն մարկիդ... նա անյոյս է... (Թեթեւ հեղձութեամբ). Յետոյ... ճշմարտութիւնը վկայ... ես կարող եմ... ձեզ մի բան խոստովանել... Վաղուց ի վեր ես իմ սրտումը գուրգուրում, փայփայում եմ իմ Վոպերդիւ կալուածքի վրայ աւելացնեմ ձեր կալուածքը... (Մարկիդը ցնցում է). Ինչ ծածկում... այո՛, դա իմ երազներից մէկն է... Իմ այդ երազը... (Յոյց է տալիս սեղանի վրայ բացարած զործը)... ես կարող եմ իրագործել վա-

դը... (կոշտութեամբ) Եթէ ես ցանկանամ... (հորից բարեսրտութեամբ)... Մակայն դուք ինձ շատ էք դուր գալիս... Եւ ես ինքքս ինձ ասում եմ... փոխանակ այդպիսի՝ թէ ձեզ և թէ ինձ համար անախորժ և ծանր ծայրայեղութիւնների դիմելու... աւելի լաւ չէ արդեօք համաձայնութեան դանք... հաշտութեան մի միջոց և հող գտնենք... Որպէս պատուական, ազնիւ մարդիկ՝ մենք կարող ենք այդ գործը բարեկամաբար վերջացնել...

ՄԱՐԿ. (առնում ինքնապաշտպանութեամբ). Ի՞նչ ասեմ... Ես էլ հէնց այդ եմ ցանկանում...

ԻՍԻԴ. Դա ձեզանից է կախում...

ՄԱՐԿ. Ի՞նչ էք ինձ առաջարկում...

ԻՍԻԴ. Մի հիշատելի կոմբինացիա, պարոն մարկիզ...

ՄԱՐԿ. Տեսնենք...

ԻՍԻԴ. Բայց... դուք սկզբունքների տէր մարդ էք... մեծ սկզբունքների... Ժամանակակից, moderne շարժումից դուք դուրս էք կանգնած... Անցեալի հնացած գաղափարներով էք դուք առաջնորդուում... և թող տուէք ինձ ասել... անցեալի նախապաշարմունքներով... որ այսօր ոչ մի առնչութիւն չ'ունեն... Ասպետ լինել... ես այդ հասկանում եմ... սակայն դա գործնական չէ... Շատ ցաւալի է...

ՄԱՐԿ. (Յուզուած, կեղծ վեհութեամբ). Պակաս գործնական լինել մի հասարակութեան մէջ, որ շատ է գործնական դասել... դա ժամանակակից ազնւականութեան raison d'être-ը, նրա փառքն է...

ԻՍԻԴ. Դա նրա մահն է...

ՄԱՐԿ. (կեղծ վեհութեամբ). Թո՛ղ լինի... Մեզ մօտ... պարոն... նախ և առաջ՝ պատիւը... ապա՝ շահը...

ԻՍԻԴ. Դարձեալ պատիւ...

ՄԱՐԿ. Ի՞նչպէս...

ԻՍԻԴ. Ոչինչ... ներողութիւն... Ես որդուս մասին էի մըտածում... Մի փոքրիկ գուգադիպութիւն էր...

ՄԱՐԿ. (հուռալ ինքնահաւանութեամբ). Անկասկած... քաղաքականութեան... և մանաւանդ կրօնի նկատմամբ իմ սկզբունքները անդրդուելի են... ես երբէք նրանց չեմ դրժիլ... Սակայն ես ընդդէմ չեմ յառաջադիմութեան. ես նրան չեմ բաղաձայնում, հերքում... ես կողմնակից եմ սոցիալական մի քանի անհրաժեշտ փոփոխութիւնների, նորութիւնների, աւելի քան դուք կարծում էք... միայն թէ նրանք ոչ մի բանով չը դիպչեն իմ իդէալին...

ԻՍԻԴ. Այո՛... սակայն նրանք՝ այդ սոցիալական փոփոխութիւնները դեռ սպասում են...

ՄԱՐԿ. Ոչ... ոչ... Վերջապէս ասացէք, տեսներ որն է ձեր կոմբինացիան...

ԻՍԻԴ. (Բիլլ լոռեթիւնից յետոյ). Ճիշտն ասած... պարոն մարկիդ... դուք ինձ քիչ վհատեցրիք... ձեր մեծ-մեծ բառերով... Պատիւ... պատիւ... Անշուշտ... Սակայն իւրաքանչիւրը պատիւն իր կերպ է հասկանում... Եւ ես երկիրդ եմ կրում... որ ձերը իմի նման չը լինի... Ո՛չ... գիտէք ինչ... այն կոմբինացիան, որի մասին ես քիչ ստաջ մտածում էի, այժմ ես նրանից հըրաժարւում եմ... աւելի լաւ է՝ լռեմ...

ՄԱՐԿ. Բայց եւ այնպէս, ասացէք...

ԻՍԻԴ. Ի՞նչ օգուտ:

ՄԱՐԿ. Ուրեմն դա մի սարսափելի բան է...

ԻՍԻԴ. Մի հասարակ գործ...

ՄԱՐԿ. Զրոյց է՝ անում ենք... Չէ որ սա ոչ մի բանի մեղ չի հարկադրում...

ԻՍԻԴ. Շատ լաւ... պարոն մարկիդ... քանի որ դուք ցանկանում էք... (Լոռեթիւն). Գիտէք, ես զիպլումառ չեմ, որ ծուռ ու մուռ, խոտորնակի ձանապարհներով դնամ... Նպատակիս եւ ուղղակի եմ գիմում... Թղթախաղի ժամանակ ես թղթերս ձեռքիս՝ սեղանի վրայ եմ պահում... երկու խօսքով ասելիքս յայտնեմ... Դուք մի քանդուած, հարստութիւնը կորցրած... որդի ունէք... ես... մի շատ հարուստ աղջիկ... չափազանց հարուստ... (Լոռեթիւն). Դրանց ամուսնացնենք...

ՄԱՐԿ. (Տեղից բարձրանում է). Ի՞նչ... ի՞նչ...

ԻՍԻԴ. Նրանց ամուսնացնենք... Եւ քանի որ ես ընդունակ եմ զոհողութիւնների... ձեր մի միլիոն երեք հարիւր քօան հազար պարտքը ձեզ եմ ընծայում... Եւ ձեր կալուածքը ամբողջովին, անվթար դուք նորից յետ էք ստանում... (Լոռեթիւն). Սակայն, պարոն մարկիդ, նստեցէք, խնդրեմ (Մարկիդը նորից նստում է). Տեսնում էք, որ Իսիդոր Լըչա... այն canaille զը-Լըչա, ինչպէս նրան անուանում են... գիտէ... պատեհ գէպքում կարող է վարուել, որպէս մի իսկական ասպետ...

ՄԱՐԿ. (Ինքն իրան խօսելով). Դա անկարելի բան է... (Լըռեթիւն). Դուք ձեր ասածների մասին, կարծեմ, չէք մտածում...

ԻՍԻԴ. Ներողութիւն... ես շատ լաւ եմ մտածել... Ես մտադիր եմ իմ աղջկանը տալ երկու հարիւր յիսուն հազար ֆրանկ տարեկան հասոյթ... Դրամագլուխը ինքս եմ պահում... Իմ ձեռքում նա իրան աւելի լաւ է զգում... որովհետեւ նա ինձ ձանաչում... ինձ հետ դուարձանում է...

(Ծիծաղում է):

ՄԱՐԿ. Դա հօ... մի առուծախս է:

ԻՍԻԴ. Գործ է, գործ:

ՄԱՐԿ. Դուք ուզում էք ինձ գնել... ասացէք... ինձ գնել:

ԻՍԻԴ. Օհ... ահա նորից մեծ-մեծ բառերը եկան... Ո՛հ...

Ո՛հ... պարոն մարկիզ... ևս ուզում եմ ձեզ անխուսափելի աղէտից փրկել... Ի՞նչ կ'աւելացնէք, երբ դուք ստիպուած պիտի գրկուէք այն Պորսելէի հրաշալի կալուածքից... ձեր փարթամ կեանքը, գոյութիւնը՝ ոչնչութեան դատապարտուած... ինքներդ ծանր պարտքերի տակ ճնշուած... ձեր ստացուածքը աճըրդի հանուած... ձեր հոգակաւոր տոհմանշանը՝ պարտամուրհակի դրոշմով պսակուած՝ դատարանից-դատարան պտտելիս... Երանի թէ բաղմամբիւ թշուառութիւններից յետոյ մի օր ձեզ աղջուի ինձ նման պատեական մարդու մօտ կառավարչի պաշտօն ստանձնել, որպէս ծերունի Դը Լա Ֆոնտընելը: Օ՛հ, այդ տեսակ կեանքը ևս շատ լաւ եմ ճանաչում... Ես ինքս երկու անգամ կորցրել եմ իմ բոլոր ստացուածքը... Հեշտ բան չէ... Բայց ես... հնար, զօրութիւն ունեմ... Իսկ դուք... դուք՝ միայն սկզբունքներ... Այնպիսի թշուառութիւնների զէմ, հաւատացէք ինձ... նրանք շատ թոյլ պաշտպաններ են...

ՄԱՐԿ. Ինձ գնել... ինձ...

ԻՍԻԴ. Շարունակ միենոյն բանը մի կրկնէք... Ես չեմ գնում... այլ փոխանակում եմ Գործերը փոխանակութիւն են... Մարդիկ փոխանակում են փող... կալուածք... տիտղոսներ... ընտրողական հրահանգ-պատգամներ... խելք... հասարակական զիրք... պաշտօններ... սէր... հանճար... Սրանից աւելի օրինաւոր... և, ձեր կասկածը փարատեցէք... աւելի պատեաւոր բան չը կայ...

ՄԱՐԿ. (Քիչ փափկելով). Սակայն... իմ որդին... բոլորովին դիտաւորութիւն չ'ունի ամուսնանալու...

ԻՍԻԴ. Այո... ևս այդ դիտեմ... Մարդ յաճախ դիտաւորութիւն չ'ունի մի բան կատարելու... բայց և այնպէս անում է... Անակնկալ հանգամանքներ... կեանքի պահանջներ... յաճախ փոխում, ուղղում են վաղօրօք վճռուած, որոշուած դիտաւորութիւններ... Օ՛հ, պարոն մարկիզ... եթէ թոյլ տաք, որ ես լինեմ ձեր առաջնորդը, ես ձեզ առաջնորդեմ... ինչ փառաւոր... ինչ հրաշալի գործեր չէինք անիլ... երկուսս միասին... Օ՛հ, սատանան գիտէ... Այ Պորսելէների ապարանքը... Այն հոյակապ ապարանքը, որ ձեր հանգուցեալ եղբայրը սնանկանալուց յետոյ ծախեց իշխան Կարդոֆին... մի քանի ամսից յետոյ նորից վաճառքի է հանուում...

ՄԱՐԿ. Ա՛հ...

ԻՍԻԴ. Դուք չէիք իմանում...

ՄԱՐԿ. Բոլորովին...

ԻՍԻԴ. (Հրապուրող ժպտով). Ա՛յ, տեսնում էք... Ես եւմ ձեր ընտանիքի գործերով զբաղուողը... և ձեզ նրանց մասին տեղեկութիւններ տուողը... Այն ապարանքը... միջի կահ-կարասիքը, սարքուկարգը, ամբողջ կողակցիաները... ես կարող էի գնել... և դնել իմ աղջկայ հարսանեաց բաժինքի մէջ... Իսկիսկ մի արքայազնայն ընծայ... չէ... ընտանեկան կապերով... և ընդհանուր շահերով միացած... մենք երկուսս կարող ենք ուղղակի ամբողջ աշխարհը նուաճել... (Փոքր լուծիւն... Մարկիզը շարունակ մտախոհ է), Նկատեցէք, որ այս փոխանակութեան մէջ, որ մենք անում ենք... դուք տալիս էք այնքան, որքան և ես... Հետեւրար մեր երկուսի կողմիցն էլ կը լինի կատարեալ ճշտութիւն... Եթէ նոյնիսկ մենք ձեր բերածը գնահատենք, փողի վերածնէք,—չէ որ վերջիվերջոյ մենք դրան պիտի գանք, հասնենք, որովհետեւ ամեն ինչ գրամով է միայն գնահատուում,—ձեր բերածը դուցէ աւելի մեծ լինի, քան իմը... Սա մի պարզ հաշիւ է... դա քիչ կը նստեցնէ, կը խաղաղեցնէ ձեր բոլոր զիւրազգածութիւնը... (Մարկիզը զլուխը շարժում է). Հետեւրար... եթէ այս գործի մէջ ծախսուող մարդ կայ... այդ դուք չէք... այլ ես (Մարկիզը զարմացած, ապշած նայում է Ղըշային)... Այո... այո... այս շատ պարզ է... Նախ, դուք վայելում էք գէներալ Բրադբորի բոլոր վստահութիւնը... ձեր մօրաքրոջ որդի... յայտնի զինուորականը... որ չուտով շտաբի չեֆ պիտի նշանակուի... ես այդ գիտեմ...

ՄԱՐԿ. Ուրեմն դուք ամեն ինչ գիտէք:

ԻՍԻԴ. (Համեստութեամբ). Դա իմ արհեստն է, պարոն մարկիզ... Գէներալի ձեր այդ վստահութիւնը վայելելը ինձ հարկաւոր է... մի վիթխարի ձեռնարկութեան համար, որ մասամբ Բրադբորից կախում ունի: Այդ գործին, անկասկած, ես ձեզ ես մասնակից եմ անում: (Խորհրդաւոր կերպով). Հայրենիքի պաշտպանութեան մի քանի ծրագիրներ ունեմ, որոնց՝ ես կարծում եմ՝ գէներալը հաւանութիւն կը տայ: Չէ որ ես մի պատեական, մի ընտիր ազգասէր եմ... դրա մէջ... կարծեմ... դուք չէք կասկածում... (Կեղծ ողբերգութեամբ). Ինչ որ էլ լինի... սակայն ես նախ և առաջ ազգասէր եմ... Մենք դրա մասին զեռ խօսելու առիթ կ'ունենանք... (Ղուծիւն). Դուք ունէք նոյնպէս...

ՄԱՐԿ. Դարձեալ նոր բան...

ԻՍԻԴ. Դուք կարող էք ազդել և պատգամաւորական ընտրութիւնների վրայ... Թէն ոչ մեծ ծաւալով... Այս անգամ... ես ոչ մի բան... անտես չեմ անելու... Ձեր ազդեցութիւնը... դուք

գործ կը դնէք... բնականաբար, յօգուտ իմ թեկնածութեան... (Մարկիզը քիչ վեր-վեր է ցատկում)։ Իհարկէ՝ ոչ բացարձակ, օր-ցերեկով... Ես ձեզանից ժողովրդին ուղղած կոչ, յայտարարութիւններ չեմ պահանջում... Ձեմ ասում՝ գնաք հրապարակները, գինեւոնները և դուռք՝ «ձեր քուէները Իսիդոր Լըչային տուէք»... Ո՛չ... անկասկած... Գաղտնի պրոպագանդա... ահա թէ ինչ է հարկաւոր... Ես ձեզ կ'ասեմ, թէ ինչպէս պիտի գործէք... Լինելով Պարիզի յեղափոխական կոմիտէի թեկնածուն... միւս կողմից՝ ունենալով կառավարութեան և բոյալիստ-բոնապարտիստ-նացիոնալիստ-կղերական կուսակցութեան մի ֆրակցիայի գաղտնի պաշտպանութիւնը... իմ յաջողութիւնը ապահովուած, ակներև է...

ՄԱՐԿ. Ուրեմն... պարոն... դուք ոչ միայն իմ անունն էք գնում... այլև իմ անձնական վարկը... իմ քաղաքական ազդեցութիւնը... և դեռ էլ ինչ։

ԻՍԻԴ. Ճիշտն ասած... պարոն մարկիզ, դուք ինձ շատ վշտացնում էք... Ամեն ինչի էլ դուք հէնց շարունակ կոչոտ, բիրտ նշանակութիւն էք տալիս, որ նա բոլորովին չ'ունի... Այդպիսով դուք դժուարին, եթէ չ'ասեմ՝ անհնարին էք դարձնում այն համաձայնութիւնը, որ ես ցանկանում եմ... որից ես սակայն կը հրաժարուեմ... հաւատացէք... առանց ջաւելու... (Շեշտելով)։ Իբրև միսթարութիւն... ես կ'ունենամ... Պորսելէի գեղեցիկ կալուածքը... որ իմ երազն է...

(Փոքր լուծիւն)։

ՄԱՐԿ. Սակայն... պարոն Լըչա... եթէ իմ տեղեկութիւնները ճիշտ են... դուք ընտրութիւններին, կարծեմ, ներկայանում էք ընկերավարական... հակակղերական ծրագրով... ընդդէմ դուքս Դը Մոփիլ... որ իմ բարեկամն է... և որի հետ ես բոլորովին համերաշխ-գաղափարակից եմ...

ԻՍԻԴ. Ծրագիրներ... (Մի շարժուածք է գործում, որով ամեն ինչ հրում, հեռու է նետում)... Ընտրութեան յետոյ ծրագիրները... հեռու են նետուած... և նրանք վազում են, գնում ու գնում...

ՄԱՐԿ. Դա կարելի բան է... Սակայն այն ես ճիշտ է, որ դուք ներկայանում էք՝ որպէս եկեղեցու անհաշտ թշնամի...

ԻՍԻԴ. Անհաշտ... Դուք ինձ դարմայնում էք, պարոն մարկիզ... Համոզմունքները, այո, երբեմն անհաշտ են լինում... Եւ դեռ ո՞վ գիտէ... Սակայն գործերը... երբէք... ինչ էլ որ լինի... (Նա տեղից բարձրանում է եւ ողբերգական քայլում)։ Ի՞նչ էք կարծում, իմ ընկերավարական, հակակղերական թեկնածութիւնը միթէ եկեղեցուն աւելի հաճելի չի լինիլ, քան ձեր բա-

ընկամ Դուքս դը-Մոֆինը... Հը նայած նրա հրաշագործութեան... սուրբ Կոյս Մարիամին և այլ սուրբերին ուղղած կոչերին և աղերսներին...

ՄԱՐԿ. (շեգնօրէն). Այդ տեսակէտը նոր է...

ԻՍԻԴ. Յաւիտեանական է, պարոն մարկիզ, յաւիտեանական... Ասացէք, խնդրեմ... Ընչ է ներկայացնում դուքսը... Անցեալը, այսինքն փոշի... անշարժութիւն... եկեղեցին... Եկեղեցին... Սակայն բաւական է, ինչ որ եկեղեցին իր ետեւից քաջ տուաւ վաղեմի փառքերից զրկուած ազնւականութիւնը... Ազնւականութիւն... որ իր կաստայական նախապաշարմունքների և պատւասիրութեան բուռնացի մէջ ինքը կամաւոր կերպով կանգնել, անշարժացել է... Նա չի խառնուում, չի ընկնում այն հոսանքի մէջ, որ ապրում և ստեղծագործում է... Ազնւականութիւն, որ իր թուլութեամբ կամաց-կամաց յիմարաբար կորցրեց... հող... դղակ... աղբեցութիւն... գործունէութիւն... և որը փոխանակ եկեղեցուն ծառայելու... իւրաքանչիւր օր իր անժողովրդականութեամբ և իր թուլութեամբ վրասներ է հասցընում... նրան

ՄԱՐԿ. (կամաց ծիծաղելով). Հա... հա... հա...

ԻՍԻԴ. Այո, այո, պարոն մարկիզ... իմ ասածները շատ ճիշտ են... Եկեղեցին ևս հետեւում է ժամանակակից շարժման... Փոխանակ նրան ընդդիմանալու՝ ինքն է նրան առաջնորդում և ուղղութիւն տալիս... Եկեղեցին սփռուելու, յեղափոխուելու, յարմարուելու մի ընդունակութիւն ունի, որ հիանալի է... իշխելու մի ոյժ, որ իրաւացի է... որովհետեւ նա աշխատում է անդու... անդադար... յուզում, շարժում է մարդկանց... փող... գաղափար... կուտական երկիրներ... Նա ամեն տեղ է այսօր... անում է ամեն ինչ... Նա ամեն ինչ է... Նա ունի սուրբ խորաններ, ուր նա հաւատ է վաճառում... հրաշագործ աղբիւրներ, որտեղից նա սնոտիապաշտութիւն է լցնում շէրը և տարածում... խոստովանատներ, ուր նա պատրանք ու կեղծ պատիւ է ծախու հանում... Ապրանքներով լեփ-լեցուն խանութներ ունի նա... ոսկով լի բանկեր... բանկային գրասենեակներ... գործաւորներ... լրագիրներ... Նրա տրամադրութեան տակ են բոլոր կառավարութիւնները, որոնց նա կարողացաւ իր հլու-հնազանդ գործակալը, իր խոնարհ միջնորդը դարձնել... Տեսնում էք, որ ես կարողանում եմ նրան ըստ արժանոյն գնահատել...

ՄԱՐԿ. (շեգնութեամբ). Դուք հրաշալի էք։ Ես չէի կարծում, թէ դուք այդքան պերճախօս էք եղել...

ԻՍԻԴ. Ես ամեն ինչ յաւ եմ տեսնում և գնահատում... Անցեալներում նա սուրբ իր ազնւականների ձեռքն էր դնում և

նրանց յղում իր համար պատերազմելու, սպանելու, կոտորած մահ, տալու և մահ ստանալու Սակայն այժմ պատերազմը իր կերպարանքը փոխել է... Հետևաբար փոխուել է և նրա զենքը... Աշխատութեան գործիքով և փողով են այժմ կուռում... Ազնւականները չը կարողացան օգտուել նշ այդ գործիքից... և նշ փողից... Եւ այդ ամենը մենք հաւաքեցինք... Իհարկէ...

ՄԱՐԿ. Ցեխի և արեան միջից...

ԻՍԻԴ. Ոչէ՛նչ... Նա մաքրուում է... Սմեն ինչ մաքրուում է... Նոյնիսկ ձեր տոհմանշանները... (Լոռնիւն). Լաւ հասկացէք, որ եկեղեցին ինձ նման մարդկանց մէջ է իր բնական դաշնակիցներին որոնում և գտնում... Եկեղեցին և ես... միևնոյն ցեղից, միևնոյն տեսակիցն ենք... պարհն մարկիդ... Իսկ ինչ վերաբերում է ազնւականութեան... Նա մեռած է... Նա մեռած է... որովհետև նա չ'ուզեց ճանաչել կեանքի առաջին կանոնը՝ աշխատանքը... այսինքն կեանքի մէջ գտնուող բոլոր ոյժերի շահագործելը...

ՄԱՐԿ. Սակայն, պարոն... քանի որ ես այդպէս մեռած եմ —ինչպէս դուք էք ասում,—էլ ինձանում ինչ կարիք ունէք...

ԻՍԻԴ. Դա իմ գործն է...

ՄԱՐԿ. Միայն դա իմը չէ...

ԻՍԻԴ. Ինչպէս կամենաք... Սակայն դուք սխալուում էք...

ՄԱՐԿ. Դուք ինձանից չէք սպասում... Կարծեմ... որ ես պաշտպանեմ, լուսնամ եկեղեցին այն տարօրինակ ամբաստանութիւններից, որ դուք թափեցիք նրա զլլին, և որոնք նրան բոլորովին չեն գիպելի...

ԻՍԻԴ. Ես նրան չեմ մեղադրում... այլ փառաւորում... երկինք եմ հանում... (Ուսերը ծոծուելով). Դուք Նոյնիսկ չը գիտէք, թէ ինչ է եկեղեցին...

ՄԱՐԿ. Եթէ եկեղեցին մի դժբաղդ զիպուածով... նման լինէր ձեր նկարագրած պատկերին... ես աւելի լաւ կը համարէի իրօք նրան բոլորովին չը ճանաչել... Եւ ես... պարհն, պարծենում եմ, որ պատկանում եմ այն ազնւականութեան, որի անկումն էք դուք հռչակում ձիշտ այն րոպէին... երբ նա նորից ոտքի է կանգնում...

ԻՍԻԴ. Այո՛... փորձելով ամենուրեք քաղաքացիական և ցեղական պատերազմ բռնկտել, ծագեցնել...

ՄԱՐԿ. Պաշտպանելով իր, հետևաբար և ամբողջ ազգի աւանդութիւնները... Եւ ես էլ աւելի եմ հպարտանում...

ԻՍԻԴ. (Ընդհատելով). Շարունակեցէք... շարունակեցէք...

ՄԱՐԿ. Որ երբէք չեմ հպատակուել, հնազանդուել այն գաբշելի... լիբը և արիւնարբու զեմօկրատիային... որ պատուի...

հայրենիքի... հաւատի... գթութեան փոխանակ միայն փողն է պաշտում...

ԻՍԻԴ. Շարունակեցէք... շարունակեցէք... պարսն մարկիդ... Ձեր սիրտը թեթեացրէք... Մարդու վրայ դա լաւ է ազդում...

ՄԱՐԿ. Դուք յաւակնութիւն ունէք իշխելու, պետ և զըլխաւոր լինելու... Եւ դուք իշխում էք... միայն մի առժամանակ: Սակայն դուք աւելի ծաղրելի էք, քան չարաղէտ... Հէնց որ հարստանում էք թէ չէ... դուք միայն մի գաղափար ունէք — կապկարար մեղ ընդօրինակել... Մեր ապրանքները, մեր կալուածքները, մեր սովորութիւնները, մեր մոլութիւնները, մեր հին փառաւոր անուները... մինչև անգամ մեր հին կահ-կարասիքը: (Խրոխտաբար)... Միայն մի բան կայ, որ չի կարելի գնել... գիտէք ինչ, նրանց գործածելու ձևը, եղանակը...

ԻՍԻԴ. Դա ինձ ցաւ կը պատճառէր... Ես իմ սեպհական եղանակն ունեմ...

ՄԱՐԿ. Դուք այնքան էլ խստապահանջ չէք:

ԻՍԻԴ. Նա ինձ բաւական է...

ՄԱՐԿ. Նա բաւական չէ ժողովրդին, որին դուք քերթում էք:

ԻՍԻԴ. Դրա մասին... ոչ դուք... ոչ ես ոչինչ չը գիտենք... Ժողովուրդը առայժմ իմ նիստուկացը աւելի է սիրում, քան ձերը...

ՄԱՐԿ. Եթէ դուք կամենում էք աշխարհը նուաճել... ինչպէս դուք էիք ասում... քաջութիւն ունեցէք մի որեւէ նոր բան հնարել և ոչ վաղեմի խեղկատակութեամբ միայն բաւականեցէք... Դուք ես ձեր կողմից ձեր աւանդութիւնները ստեղծեցէք... Սակայն ոչ... դուք հոգ չէք անում ոչ մի վայելչութեան մասին... Դուք ձգտում չ'ունէք ոչ մի մեծութեան...

ԻՍԻԴ. (Ընդհատելով). Մեծութիւն... Մեծութիւն... Բառեր... որ ոչ մի նշանակութիւն չ'ունեն: Միայն մի բան կայ, որով մի ազգ, որպէս ամեն մի հիմնարկութիւն, ասեն մի անհատ, մեծ է համարւում... Դա փողն է... Եկեղեցին այդ աւելի լաւ գիտէ, քան ուրիշ այլ ոք: (Լռութիւն)... Այո... այո... ձեր կարծիքով մենք աւաղակներ ենք... Մովսիսն աւաղակներ... սոսկալի ծովասպատակներ... Դա վճռուած, կնքուած է... և իրականապէս՝ ճիշտ... Սակայն... ասացէք... աւաղակներ, որ մի բան են կատարել... ծովասպատներ, որ յառաջադիմութեան համար մի բան են անում, իրանց մասն են բերում, տալիս... յառաջադիմութեան... այսինքն մարդկային բարօրութեան... Անարդ, սինլքոր, անդգամներ էք մեղ անուանում... անդգամներ,

որ լցնում են իրանց սնդուկները ոսկով... դա կարելի է...
Բայց որ առաջ են բերում ամենուրեք շարժում... ամենուրեք
հարստութիւն... կեանք ամենուրեք... Քանի որ դուք աւանդու-
թիւնների էք դիմում... յիշեցնեմ ձեզ... Անցեալները, ձեր դե-
րիշխանութեան դարում, երբ դուք քերթում էիք ժողովրդին...
սովի, անօթութեան մատնում... նրան որպէս ուտելիք թողնում
էիք քաղաքներում՝ առունների աղտոտութիւնը... գիւղերում՝
այն փոքրիկ հողակոյտը, ուր նա ոտք էր դնում... Փոխարէնը
ինչ էիք դուք նրան տալիս... Փայտի հարուածներ, պարոն մար-
կիդ... Իսկ ես... ես նրան տալիս եմ լաւ խճուղիներ... երկա-
թուղիներ... ելեկտրական լոյս... առողջապահութիւն... քիչ կրթ-
ութիւն... արժան մթերքներ... աշխատանք... Աւելի պակաս
փառաւոր բաներ, բան փայտի հարուածներն են... ես դրա հետ
համաձայն եմ... Բայց և այնպէս, խոստովանեցէք... ծովային
աւազակների համար... բաւական չիկ է... չէ...

ՄԱՐԿ. Պարոն, ես չեմ կամենում և չեմ կարող այս լրա-
զերական բանակուի մէջ ձեզ հետեւել...

ԻՍԻԴ. Եւ իրաւունք ունէք... Բաւական է, ինչ որ փիլի-
սոփայութիւն արինք... փիլիսոփայութիւնը ոչ մի հետեւանքի
չի հասցնում... և մենք անօգուտ կերպով կորցնում ենք մեր
խօսակցութեան թելը... Ի՞նչ կ'առէք... կ'ուզէք ինձ հետ գրազ
գալ:

ՄԱՐԿ. Ո՛չ գրազ և ոչ առուծախս...

ԻՍԻԴ. Հնա, ճիշտ... Ես կը տանէի... Շատ լաւ. այժմ
այդ գրազը ես ձեզ այլ ձևով կ'առաջարկեմ... Գնացէք, հարցրէք
այն սէֆագեւոս... սպիտակազգեւոս... կամ կարմրազգեւոս մեծ քա-
ղաքագէտներից մէկնումէկին, որ առաջնորդում են աշխարհը,
և որոնց դուք բոլորովին վստահանում էք... Գնացէք, հարցրէք
թէ կուզ հէնց միայն ձեր խոստովանահօրը և տեսէք՝ նա ո՞րի
կողմը կ'անցնի... Յիսուս միլիոնի տէր, սոցիալիստ, անհաւատ,
եկեղեցուց բանադրուած, հակակղերական Իսիդոր Լըչայի, թէ
ձեր աղքատ աննշան դուքս Դը Մոթիի... Տեսնե՞ք՝ նա մի բո-
ւլէ կը տատանուի... (Լռութիւն... Երկար նրա աչքերին նայելով): Զի
տատանուիլ, չէ... Ապա նրանից հարցրէք մի խորհուրդ ես...
Իմ ձեզ առաջարկածներիս վերաբերմամբ՝ ամուսնութեան հայրն...
Կարող էք արգէօք ձեր ձեռքը խղճի վրայ դնելով՝ ասել... Թէ
նա՝ ձեզ իր օրհնութիւնը տալով, չի պատասխանիլ. «Զաւանկս...
դու կարող ես... դու պարտ ես այդ անել... յանուն մեր Մայր
Սուրբ Եկեղեցոյ»:

(Դարձեալ լռութիւն... Երկուսն էլ իրար են նայում):

հայրենիքի... հաւատի... գթութեան փոխանակ միայն փողն է պաշտում...

ԻՍԻԴ. Շարունակեցէք... շարունակեցէք... պարոն մարկիդ... Ձեր սիրտը թեթեացրէք... Մարդու վրայ դա լաւ է աղդում...

ՄԱՐԿ. Դուք յաւանքութիւն ունէք իշխելու, պետ և գըլխաւոր լինելու... Եւ դուք իշխում էք... միայն մի առժամանակ: Սակայն դուք աւելի ծաղրելի էք, քան չարաղէտ... Հէնց որ հարստանում էք թէ չէ... դուք միայն մի գաղափար ունէք — կապկաբար մեզ ընդօրինակել... Մեր ապրանքները, մեր կալուածքները, մեր սովորութիւնները, մեր մոլութիւնները, մեր հին փառաւոր անուանները... մինչև անգամ մեր հին կահ-կարասիքը: (Խորխտաբար)... Միայն մի բան կայ, որ չի կարելի գնել... գիտէք ինչ, նրանց գործածելու ձեւը, եղանակը...

ԻՍԻԴ. Դա ինձ ցաւ կը պատճառէր... Ես իմ սեպհական եղանակն ունեմ...

ՄԱՐԿ. Դուք այնքան էլ խստապահանջ չէք:

ԻՍԻԴ. Նա ինձ բաւական է...

ՄԱՐԿ. Նա բաւական չէ ժողովրդին, որին դուք քերթում էք:

ԻՍԻԴ. Դրա մասին... ոչ դուք... ոչ ես ոչինչ չը գիտենք... Ժողովուրդը առայժմ իմ նիստուկացը աւելի է սիրում, քան ձերը...

ՄԱՐԿ. Եթէ դուք կամենում էք աշխարհը նուաճել... ինչպէս դուք էիք ասում... քաջութիւն ունեցէք մի որևէ նոր բան հնարել և ոչ վաղեմի խեղկատակութեամբ միայն բաւականեցէք... Դուք ևս ձեր կողմից ձեր աւանդութիւնները ստեղծեցէք... Սակայն ոչ... դուք հոգ չէք անում ոչ մի վայելչութեան մասին... Դուք ձգտում չ'ունէք ոչ մի մեծութեան...

ԻՍԻԴ. (Ընդհատելով). Մեծութիւն... Մեծութիւն... Բառեր... բառեր... որ ոչ մի նշանակութիւն չ'ունեն: Միայն մի բան կայ, որով մի ազգ, որպէս ամեն մի հիմնարկութիւն, աւեն մի անհատ, մեծ է համարւում... Դա փողն է... Եկեղեցին այդ աւելի լաւ գիտէ, քան ուրիշ այլ ոք: (Ղուծիւն)... Այո... այո... ձեր կարծիքով մենք աւազակներ ենք... Ծովային աւազակներ... սոսկալի ծովասպատակներ... Դա վճռւած, կնքուած է... և իրականապէս՝ ճիշտ... Սակայն... ասացէք... աւազակներ, որ մի բան են կատարել... ծովասպատակներ, որ յառաջադիմութեան համար մի բան են անում, իրանց մասն են բերում, տալիս... յառաջադիմութեան... այսինքն մարդկային բարօրութեան... Անարգ, սինլըոր, անդգամներ էք մեզ անուանում... անդգամներ,

որ լցնում են իրանց սնդուկները ոսկով... դա կարելի է... Բայց որ առաջ են բերում ամենուրեք շարժում... ամենուրեք հարստութիւն... կեանք ամենուրեք... Քանի որ դուք աւանդութիւնների էք դիմում... յիշեցնեմ ձեզ... Անցեալները, ձեր զինվածութեան դարում, կրք դուք քերթում էիք ժողովրդին... սովի, անօթութեան մատնում... նրան որպէս ուտելիք թողնում էիք քաղաքներում՝ առուների աղտոտութիւնը... զիւղերում՝ այն փոքրիկ հողակոյտը, ուր նա ոտք էր դնում... Փոխարէնը ինչ էիք դուք նրան տալիս... Փայտի հարուածներ, պարոն մարկիզ... Իսկ ես... ես նրան տալիս եմ լաւ խնուղիներ... երկաթուղիներ... ելեկտրական լոյս... առողջապահութիւն... քիչ կըրթութիւն... արժան մթերքներ... աշխատանք... Աւելի պակաս փառաւոր բաներ, բան փայտի հարուածներն են... ես դրա հետ համաձայն եմ... Բայց և այնպէս, խոստովանեցէք... ծովային աւազակների համար... բաւական չիկ է... չէ...

ՄԱՐԿ. Պարոն, ես չեմ կոմենում և չեմ կարող այս լրացրական բանակաւ մէջ ձեզ հետեւել...

ԻՍԻԴ. Եւ իրաւունք ունէք... Բաւական է, ինչ որ փիլիսոփայութիւն արինք... փիլիսոփայութիւնը ոչ մի հետեւանքի չի հասցնում... և մենք անօգուտ կերպով կորցնում ենք մեր խօսակցութեան թելը... Ի՞նչ կ'աօէք... կ'ուզէք ինձ հետ գրազ դալ:

ՄԱՐԿ. Ո՛չ գրազ և ոչ առեւտար...

ԻՍԻԴ. Հա, ճիշտ... Ես կը տանէի... Շատ լաւ. այժմ այդ գրազը ես ձեզ այլ ձեով կ'առաջարկեմ... Գնացէք, հարցրէք այն ահագնատ... սպիտակազգեստ... կամ կարմրազգեստ մեծ քաղաքագէտներից մէկնումէկին, որ առաջնորդում են աշխարհը, և որոնց դուք բոլորովին վստահանում էք... Գնացէք, հարցրէք թէկուզ հէնց միայն ձեր խոստովանահօրը և տեսէք՝ նա որի կողմը կ'անցնի... Յիսուս միլիոնի տէր, սոցիալիստ, անհաւատ, եկեղեցուց բանադրուած, հակակղերական Իսիդոր Լըշայն, թէ ձեր աղքատ անշնան դուքս Դր Մոփի... Տեսնե՛ք՝ նա մի բոլորէ կը տատանուէ... (Լռութիւն... Երկար նրա աչքերին նայելով): Ձի տատանուիլ, չէ... Ապա նրանից հարցրէք մի խորհուրդ ևս... Իմ ձեզ առաջարկածներիս վերաբերմամբ՝ ամուսնութեան կայն... Կարող էք արդեօք ձեր ձեռքը խզի վրայ դնելով՝ ասել... Թէ նա՝ ձեզ իր օրհնութիւնը տալով, չի պատասխանիլ. «Զաւակ... դու կարող ես... դու պարտ ես այդ անել... յանուն մեր Մայր Սուրբ Եկեղեցոյ»:

(Գարձեալ լռութիւն... Երկուսն էլ իրար են նայում):

ՄԱՐԿ. (Գլուխը քիչ ցածրացրած, քիչ անհամարձակ ձայնով). Դա անկարելի բան է...

(Լռութիւն):

ԻՍԻԴ. Օհ... (Լռութիւն)... Պարոն մարկիզ... երբ դուք եկաք այստեղ... ես միայն մի ցանկութիւն ունէի... ձեռքի մի շարժումով ձեզ խողխողել... Տեսնում էք... որքան անկեղծ եմ ես... որ ձեզ այդ ուղղակի եմ ասում... Պորսելէ կալուածքը ձեզանից խլելու մասին մեծ ուրախութեամբ էի ես մտածում... Երկու տարի է, որ ես իմն եմ համարում այն... Դա այնքան ճիշտ է... որ ահա հէնց այստեղ... այս արկղի մէջ մի մակարդակ ունեւ պատրաստած... ուր Պորսելէն իմ կալուածքի մի մասն է կազմում... Կամենսք՝ ցոյց տաւ... Այնտեղ ես ձեր աշունքը ջնջել, իմն եմ նրա տեղը դրել... Տարօրինակ է, չէ... Յետոյ... յանկարծ... չը գիտեմ ինչու... դուք ինձ դուր եկաք... դուք իմ գութն շարժեցիք... անկեղծօրէն եմ ասում... Իրականապէս... ես մի պատեական մարդ եմ... ինձ չեն ճանաչում... ես լաւ սրտի տէր եմ... Ահա թէ ինչու ես ցանկացայ մի ուրիշ միջոց գտնել... մի այնպիսի միջոց, որ բոլորիս էլ հաշտեցնէի... գոհացում տար... իմ գործերին... իմ քաւականութեան... և ձեր շահերին... (Մարկիզը հեզնութեամբ բողբոջում է). Այո, այո... ես ճիշտ եմ ասում... Սա այնքան էլ վատ միջոց չէ... Իմ աղջիկը շատ գեղեցիկ... նրա արտաքինը, շարժումները, ձեւերը... տիպը... հիանալի... ինքը՝ խելօք... Շատ օրիորդներ կը գտնէք... ձեր չըմանում... որ նրան արժենան... Այժմ երկակայեցէք նրան Պորսելէների վերականգնուած հին ապարանքներում։ Մի իսկական իշխանուհի, պարոն մարկիզ... իսկ և իսկ... իշխանուհի... ՄԱՐԿ. Ձեր դստեր յատկութիւնների վերաբերմամբ ես երբէք չեմ կասկածել...

ԻՍԻԴ. Ապա էլ ինչ կայ... Ուրեմն մի ստիպէք, որ ես վերադառնամ իմ նախկին գիտաւորութեան... Ազնիւ խօսք... դա ինձ սաստիկ ցաւ կը պատճառէ... Ես այսօր շատ լաւ տրամադրութեան մէջ եմ... օգուտ քաղեցէք նրանից...

ՄԱՐԿ. (Աւելի եւ աւելի պակաս վստահ ձայնով). Դա անկարելի բան է... Դա շատ դժուար է...

ԻՍԻԴ. Դժուարութիւնը ինչո՞ւն է... Դուք հօ առաջինը չէք, որ համաձայնում էք այդպիսի ամուսնութեան։

ՄԱՐԿ. Անկասկած ոչ...

ԻՍԻԴ. Էհ, ուրեմն...

ՄԱՐԿ. Ես չէի կամենալ ձեր սիրտը կոտրել, իմ սիրելի պարոն Լըշա... Սակայն վերջապէս... մի ուրիշ բան էլ կայ...

ԻՍԻԴ. (Աչքի տակից նրան նայելով). Ահ...

ՄԱՐԿ. Այո... Անցեալներում... դուք մի քանի դէպքեր... անախորժ արկածներ էք... ունեցել: Ես... նրանց չեմ դատում... բայց և այնպէս...

ԻՍԻԴ. Կեանքի պայքար, կեանքի կռիւ էր... Ա՛հ, եթէ պէտք լինէր քրքրել բոլոր հարստութիւնները և դնալ, հասնել նրանց աղբիւրներին... Ձերը գլխաւորապէս... դա վերջ չէր ունենալ, պարոն մարկիզ... Ձեզ ամաչեցնող, ձեզ չփոթողը... Իրականապէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակական կարծիքը և ձեր դասակարգի կարծիքը...

ՄԱՐԿ. Իմ արարքը, իմ գործունէութիւնը հասարակական կարծիքից ոչ մի կախում չ'ունենեմ...

ԻՍԻԴ. Ո՛չ... դէպի նրան դուք քիչ դիւրազգած էք... Եւ դա շատ բնական է... Սակայն լաւ իմացէք... Ով փող ունի... նրա հետ է, նրա կողմն է և՛ հասարակական կարծիքը... Մարդիկ որքան էլ հրաշալի... որքան էլ հերոս լինեն, սակայն եթէ նրանք գրոշ չ'ունենան... բոլորովին անպէտք են... Ե՛ս չեմ, պարոն մարկիզ, այդպիս ասողը... այլ ազգերի իմաստութիւնը... Եւ միթէ գծախտութիւն է դա... Սակայն ձեր շուրջը նայեցէք, ձեր շուրջը...

ՄԱՐԿ. (Ծանր... քիչ շփոթուած դէմքով). ձիշտ է. մօրեղբորս որդի Բրադարին իմ խնդրել, դիմելս... ինքնստիներեան պարսաւելի այստեղ ոչինչ չը կայ...

ԻՍԻԴ. Արդարեւ... Ընդհակառակը՝ դրանից աւելի պարզ... աւելի ճշգրիտ ոչինչ չը կայ...

ՄԱՐԿ. Իմ միջամտութիւնը... ընտրութիւնների ժամանակ...

ԻՍԻԴ. Քաղցրութեամբ... պարոն մարկիզ... քաղցրութեամբ... Այդպիսի մի չնչին բանի համար այդքան էլ մի սարսափէք... Հարկաւոր է միայն գործին վերաբերուել տակտով և վարպետութեամբ...

ՄԱՐԿ. Այդպէս է... Սակայն... այստեղ... իմ սիրելի պարոն Լըչա... բացի քաղաքական հարցը... բարեխղճութեան և նրբութեան հարց էլ կայ...

ԻՍԻԴ. Քաղաքական հարցը վճռուած, վերջացած է... Այստեղ եկեղեցին է ձեր կոնակը, ձեզ հովանաւորողը...

ՄԱՐԿ. Հովանաւորողը... հովանաւորողը...

ԻՍԻԴ. Հաստատապէս եմ ասում... Դուք ինքներդ էլ այդ շատ լաւ գիտէք... Բարեխղճութեան հարցը... Է՛հ, Աստուած իմ... Դա շատ բնական է, եթէ դուք ցանկանաք ձեր հարսի հօր աջողութիւնը... (Ուրախ, բարեսիրտ ծիծաղով). Ընդհակառա-

կը... հէնց դա է ամենաբարոյականը... Չէ որ ընտանիք ենք կազմում...

ՄԱՐԿ. Ես իմ որդու հետ չեմ խորհրդակցել...

ԻՄԻԴ. Միթէ ես իմ աղջկայ հետ խորհրդակցել եմ... Երեխաները աշխարհ են եկած, որպէսզի հնազանդ լինեն իրանց ծնողներին... Եւ բացի այդ... ասացէք խնդրեմ... պարոն մարկիզ... իսկ երբ ձեր որդին Տոնկինում ճանապարհորդութեամբ էր զբաղուած, և դուք այստեղ նրան ամուսնացնելու համար բանակցութիւններ էիք անում... միթէ նրա հետ խորհրդակցել էիք... Այդ լուրերը ինձ էլ են եկել հասել... Եւ ինչ անվայիկ ամուսնութիւն... հը'...

ՄԱՐԿ. Ասէկոսէներ... զանազան զրպարտութիւններ են դրանք...

ԻՄԻԴ. Կարելի է... Սակայն զրպարտութիւնները... յաճախ չը յաջողուած բաներ են... Բայց... ես կարծում եմ, սիրամարգերի փոքրիկ որսորդը այդպիսի խոչնդոտներ չի հանիլ, որպէս դուք էք անում... Հաւատացէք ինձ, նա այնքան էլ չի ցանկանալ տեսնել իրան սնանկացած և փոխանակ ինքն իր ապրուստը վաստակելու... նա կը գերադասէ խաղաղ, հանգիստ ապրել ուրիշների վաստակով... Իսկ ինչ ինձ է վերաբերում, պարոն մարկիզ... ես իմ անձնաւորութեամբս ձեզ չատ էլ չեմ ձանձրացնիլ... Ես ձեզ չեմ խնդրիլ, որ ինձ Jockey-Club-ը մտցնէք... (Ծիծաղում է եւ շփում է մեքերը). Աստուած վկայ, հչ... Ես ուրիշ, այլ փառասիրութիւններ ունեմ...

ՄԱՐԿ. (ձիգ գործ դնելով). Լաւ... Տեսնեմ... Խորհեմ...

ԻՄԻԴ. Ոչ, հչ... Նախ քան դուք այստեղից կը հեռանաք, անհրաժեշտ է, որ ամեն ինչ վճռուած, վերջացած լինի... Բարեախտաբար դուք այրի էք... ձեր գործողութիւնների մէջ, հետևաբար, ազատ... Յետոյ... այս տեսակ հանգամանքներում... խորհել երբէք հարկաւոր չէ... ներշնչումից լաւ բան չը կայ...

ՄԱՐԿ. Սակայն բաւական լուրջ հարց է այս... որի մասին...

ԻՄԻԴ. (Աւելի կոշտ ձայնով նրա խօսքը կտրելով). Բացի Պորսելէից, որ ես վերագործնում եմ ձեզ... դա արդէն վճռուած է... ես ձեզ տալիս եմ քիչ առաջ ձեր խնդրած երկու հարիւր հազար ֆրանկը... և ինձ վրայ եմ աւելում ձեր ուրիշ պարտքերը... (Փոքր լուծիւն.— Մարկիզը գլխակոր կանգնած... երկար նայում է գորգի մի ծաղկին). Պարոն մարկիզ... (Մարկիզը գլուխը բարձրացնում, նայում է Իսիդորին, որ հէնց այդ րոպէին ձեռքը ելեկտրական զանգակի կոճակի վրայ դնելով). Կարող եմ արդեօք այստեղ կանչել իմ կնոջը և աղջկանս:

ՄԱՐԿ. (Ոյժ գործ դնելով). Կարող էք... պարոն...

(Ծանր եւ դանդաղ կերպով նորից նստում է բազկաթոռի վրայ... Իսկողոր հնչեցնում է զանգակը... Ներս է գալիս մի ծառայ):

ԻՍԻԴ. Գնա՛, առա՛ տիկնոջը և օրիորդին, որ պարոն մարկիդ Դը Պորսելէն և ես... խնդրում ենք զալ այստեղ...

(Ծառան դուրս է գնում... Մարկիդը աչքերը մի կէտի վրայ յառած... նստած է... Իսկողոր ձեռքերը զրպաններում դրած ման է գալիս... Երկար լուռիւն):

ԵՐՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԿ. ԼԸՇԱ, ԺԵՐՄԷՆ, ԻՍԻԴՈՐ, ՄԱՐԿԻԶ.

(Նախ ներս է գալիս տիկ. Լըշա... Նա շփոթուած է... մտաւանջ նայում է մարկիդին եւ իր ամուսնուն... Յետոյ գալիս է Ժերմէն... Մի հայեացք գցելով ներկայ եղողների վրայ, նա հասկանում է, որ մի արտակարգ բան պիտի իսկոյն տեղի ունենայ... Նրանց տեսնելով՝ մարկիդը տեղից բարձրանում եւ լուռ կերպով բարեւում է... Տիկ. Լըշայի մտաւանջութիւնը բոլորէ առ բոլորէ աճում է... Իսկողոր մօտենում է իր զրասեղանին... դէմքի վրայ մի չար յաղթութիւն է նկարուած):

ԻՍԻԴ. Նստեցէք... իմ զաւակներս... Պարոն մարկիդ Դը Պորսելէ ձեզ ասելիք ունի... (Տիկ. Լըշա եւ Ժերմէն նստում են... Իսկողոր մնում է կանգնած... Նա ծալում է Պորսելի գործի թղթերը). Պարոն մարկիդ...

ՄԱՐԿ. (ձիգ թափելով եւ խուլ ձայնով). Տիկին... ես պատիւ ունեմ խնդրելու ձեր դուստր օրիորդ Ժերմէն Լըշայի ձեռքը իմ որդի կոմս Բոբերտ Պորսելէի համար...

Տ. ԼԸՇԱ. (Յապշուածիւն բոլորի... Թոթովելով). Բայց... ես... (Ձի կարողանում խօսել... ձեռքերը տանում է ճակատը... նայում իր ամուսնուն... նայում մարկիդին... իր աղջկանը). Ի՞նչպէս...

ԻՍԻԴ. Այո՛, այո՛... Ի՞նչ է պատահել քեզ... (Ժերմէն արհամարհական հայեացք է դրում իր հօր վրայ)... Ժերմէնի ձեռքն են խնդրում... Միթէ դու չը լսեցիր...

Տ. ԼԸՇԱ. Ինչպէս չէ... ինչպէս չէ... լսեցի... գլուխս չուռ է գալիս...

ԻՍԻԴ. Մայրական ուրախութիւն է, պարոն մարկիդ... Լաւ, լաւ... հանգստացիր... Թշուառական... (Ժերմէնին). Իսկ դու, Ժերմէն... պատասխանիր...

ԺԵՐՄ. (Տեղիցը վեր է կենում). Շատ մեծ պատիւ է... պա-

րոն... Ես չը գիտեմ, ինչով եմ ես դրան արժանացել... Սակայն ես մերժում եմ...

ՄԱՐԿ. (Տեղից բարձրանալով). Դուք մերժում էք, օրիորդ...

ԺԵՐՄ. Այո... պարհ...

ԻՍԻԴ. Դու մերժում ես...

ԺԵՐՄ. Այո...

ԻՍԻԴ. (Դէմքը յաջորդաբար ընդունում է զծուծ, զոնհիկ, զազիր արտայայտութիւն). Ո՛չ, դա անկարելի է... Պարոն մարկիդը իր որդու համար քեզ ամուսնութեան է խնդրում... ամուսնութեան...

ԺԵՐՄ. Ես մերժում եմ... (Մարկիդին). Ես չառցաւում եմ, որ իմ հայրը նախ քան այս տեսակցութիւնը նոյնիսկ չի մտածել իմ կարծիքն իմանալ... Դրանով այս ցաւալի և ամօթալի տեսարանից նա մեզ բոլորին էլ կ'ազատէր...

ԻՍԻԴ. (Մեղմ, խոնարհ ձայնով). Ոչ... ճշ... պարհն մարկիդ... Իմ աղջիկը լաւ չը լսեց... չը հասկացաւ... Անկասկած զարմանքը... ուրախութիւնը... հպարտութիւնը... Նա ընդունում է...

ԺԵՐՄ. (Աւելի կոշտաբար). Ես մերժում եմ... Ինչո՞ւ էք ինձ ստիպում միշտ միեւնոյն բանը կրկնել...

ԻՍԻԴ. Դա... արդէն... Հալիազանց է...

ՄԱՐԿ. (Գառնութեամբ եւ նեղացած). Դը Պորսելէի տունը դուք, անկասկած, ձեզ համար անարժան էք գտնում...

ԺԵՐՄ. Ո՛չ, պարոն, դուք սխալւում էք...

ԻՍԻԴ. Անշուշտ ճշ... Ախէր չէ՞ որ ես ասում էի...

ԺԵՐՄ. (Տխրութեամբ). Պարոն Իսիդոր Լըշայի աղջիկը իրաւունք չ'ունի անարժան համարել ոչ ոքի, ո՞վ էլ որ նա լինի... Ո՛չ... ճշ... ես մերժում եմ... որովհետեւ ես ազատ չեմ...

ԻՍԻԴ. Ազատ չեմ... Ի՞նչեք ես դուքս տալիս... Քանի որ քո մայրդ և ես... համաձայն ենք...

ԺԵՐՄ. Ես ազատ չեմ...

ԻՍԻԴ. Ինչո՞ւ:

ԺԵՐՄ. Ես այստեղ չեմ կարող յայտնել:

ԻՍԻԴ. (Սպառնալով) Ինչո՞ւ: Ինչո՞ւ:

ԺԵՐՄ. Դու ցանկանում ես, որ ես ասեմ...

ԻՍԻԴ. Այո...

ԺԵՐՄ. Ես ազատ չեմ... որովհետեւ սիրական ունեմ:

(Ընդհանուր ապշութիւն):

ԻՍԻԴ. Ի՞նչ... Ի՞նչ... Ի՞նչ ես ասում... Ո՛չ, ճշ... պարհն մարկիդ: (Ծիծաղում է՝ ատամները կրծտացնելով). Դուք տեսնում էք, որ նա հանաք է աճում... զուարճանում... Ինքն էլ չը գիտէ, թէ ինչ է ասում... Սիրական... Իմ աղջիկը... Ահ... ան... ան... Հիմալի է... (Սպառնալով մօտենում է դէպի իր աղջիկը). Հա-

մարձակուիր նորից ասել... համարձակուիր... քո հօր ատջե...
ԺԵՐՄ. Ես սիրական ունեմ... սիրական... սիրական...
Քանի անգամ... պիտի դուամ...

ԻՍԻԴ. Դու սուտ ես ասում... Նա սուտ է ասում... Ես
ձեզ ասում եմ, որ նա սուտ է ասում... Սակայն... պարոն
մարկիզ, նա ոչ ոքի հետ ծանօթ չէ... Նա ոչ ոքի չի տես-
նում... Նա սուտ է ասում... (Յանկարծ ձայնը փոխելով)... Լաւ...
Իմ սիրելի ժերմէնս... այժմ վերջացաւ... չէ... Դու կամեցել ես
ինձ հետ կատակ անել... մի լաւ կատակ... Քո ասածներդ
չենք հաւատում... Ասա, ուրեմն... որ այն ճիշտ չէ...

ԺԵՐՄ. Եւ այդ սիրականը... ես եմ նրան ընտրել... ես
նրան սիրում եմ... և նա իմն է... իմը... Նա առուծախսով չէ...
փողով չէ գնուած... Ոչ, ոչ... Նա իմն է... ամբողջովին... նա
իմն է... բոլորովին ազատ, անկախ կերպով... (Մարկիզին). Սա
ձեզ զարմացնում է, պարոն... Սովորական բան չէ, որ Լըշա
անունը կրող մի էակ ծախու չի հանուում... իրան չի վաճա-
ռում... այլ ինքնաբերաբար անձնատուր է լինում մէկին...

ԻՍԻԴ. (Իր կնոջը). Իսկ դո՞ւ... ապուշ-ապուշ այդտեղ կանդ-
նած... ոչինչ չես ասում... Գոնէ լոկեցրու նրան...

Տ. ԼԸՇԱ. (Ճնշուած). Ի՞նչ կ'ուզես, որ ես ասեմ... Աս-
տուած իմ...

ԻՍԻԴ. Ուրեմն... ճիշտ է...

Տ. ԼԸՇԱ. Ես ոչինչ չը գիտեմ... (Յանկարծ). Աստուած իմ,
Աստուած իմ... Աստուած եմ... (Արտասուում է). Այդ պիտի պա-
տահէր...

ԻՍԻԴ. Ի՞նչ... Բնչը պիտի պատահէր:

Տ. ԼԸՇԱ. (Արտասուողին ձայնով). Ես չը գիտեմ... ես չը
գիտեմ...

ԻՍԻԴ. (Կահ-կարասիքը այս-այն կողմ հրելով քայլում է). Իմ
դուստրը խելագարուած... իմ կինը խելագարուած... երկուսն
էլ խելագարուած են... (Մարկիզը կամենում է հեռանալ). Պարոն
մարկիզ... սակայն դու անկարելի բան է... անկարելի... Այս-
տեղ մի թիւրիմացութիւն կայ... ես ասում եմ՝ այստեղ մի
թիւրիմացութիւն կայ...

ՄԱՐԿ. Ինձ մնում է միայն հեռանալ այստեղից...

ԻՍԻԴ. Դուք իրաւունք ունէք: Դա աւելի լաւ է: Ես իս-
կոյն և եթ նրա հետ կը խօսեմ: (Նրան ուղեկցելով). Ա՛հ, պարոն
մարկիզ, մարդ աշխատում է զաւակների համար, աշխատում,
միլլիոններ ժողովում, որ նրանք բախտաւոր լինեն... Մարդ
քաղցր երազներ, գեղեցիկ ամբոցներ է կառուցանում... Եւ ա-
հա... Բայց ես այդ ընտանեբար կ'ուղղեմ... կը սարքեմ... Շատ

բաներ եմ տեսել... Էհ, ոչինչ... (Սւեյի ցածր)։ Եթէ մի փոքրիկ զոհողութիւն էլ հարկաւոր լինի... հասկանում էք... Ցտեսութիւն, մինչև վաղը, պարոն մարկիզ...։

ՄԱՐԿ. (Ստունուծեամբ, կեղծ հպարտ վեհուծեամբ)։ Ինձ թւում է, պարոն, որ ամեն ինչ մեր մէջ վերջացած է...։

ԻՍԻԴ. (Մի առժամանակ մարկիզին նայելուց յետոյ բաց է անում քեմի խորքի դուռը)։ Ձեզ թւում է...։

ՄԱՐԿ. Այո...։

ԻՍԻԴ. Ահ...։

ՄԱՐԿ. Մնաք բարով, պարոն... (կամենում է դուրս գնալ, Իսիդորը նրան պահում է)։

ԻՍԻԴ. Ուրեմն... այս դործը, ձեր կարծիքով, այլևս լուրջորձ է։

ՄԱՐԿ. Թողնենք այդ, պարոն։

ԻՍԻԴ. Ուրեմն... ամեն ինչ մեր մէջ վերջացած... (Մարկիզը լուռ է)... Դուք կարծում էք... (Մարկիզը դարձեալ լուռ է)... Շատ լաւ... վաղը պարտամուրհակները...։

ՄԱՐԿ. Ինչպէս կամենաք...։

(Դուրս է գնում)։

ԻՍԻԴ. (Մարկիզի գնացած ուղղութեամբ բռնեցը շարժելով)։ Canaille!...

ԶՈՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ՏԻԿ. ԼԸՇԱ, ԺԵՐՄԷՆ.

ԻՍԻԴ. A nous deux maintenant... (Գալիս ցցւում է Ժերմէնի առջեւ, որ դայրացած, կուի դրող հայեացքով նայում, հետեւում է հօր բոլոր շարժումներին)... Այդպէս... մի նայիր... թշուառական... (Սպառանալով)... Չոքիր... Բանի որ դու... այստեղ... իմ յարկի տակ ես... Ես եմ հրամայողը... լսում ես... Ես... Նախ... չոքիր... Եւ ապա... դուրս կորիր այստեղից... (Վայրենաբար բռնելով աղջկայ ձեռքերը՝ կամենում է նրան չոքեցնել, Ժերմէն ընդդիմանում է եւ վերջի վերջոյ նրա ձեռքից ազատւում)։

ԺԵՐՄ. Հանդիստ եղիր... Ես այստեղից կը գնամ, կը հեռանամ... Միայն չը կարծես՝ թէ դու ես ինձ դուրս վռնդողը... Ես այստեղից հեռանում եմ իմ յօժար կամքով... Այս ճակատագրական անհրաժեշտ դէպքը ոչ մի բանով չի առաջացնում իմ մեկնելու ժամը... Իմ քեզ ասելիքս... սրտինս քեզ հաղորդելը երկար չի տեւի...։

ԻՍԻԴ. (Ձեռքերը վեր պարզելով). Գրքեր... այն կեղտոտ գրքերն են... Ահա թէ նրանք ինչ դարձրին իմ դատերը...

ԺԵՐՄ. Թող այդ գրքերը մի կողմ... Գրքերը չեն, որ ինձ քեզանից անշատել, հեռացրել են... այլ դու ինքդ... Քո դուստրը... Ո՞րտեղից ես վերցրել, որ ես քո դուստրն եմ։ Մենք նոյն իսկ տասը բառ իրար հետ չենք փոխանակել։ Եւ ի՞նչ օգուտ, ի՞նչ հետեանք կարող էր այդ ունենալ։ Իմ ասածները դու չէիր հասկանալ... իսկ քո ասածները ինձ զգուցնում... զայրացնում էին։

ԻՍԻԴ. (Բարկացած ծաղրելով). Այո... այո... գիտեմ... վաճառականական գործերը դու ատում ես... գործերը... սակայն ոչ փողը...

ԺԵՐՄ. Քեզանից ես երբեք փող խնդրել եմ... Ես չեմ կամենում ոչ քո ընծաները... ոչ քո փողը... Ես քեզանից ոչինչ չեմ ուզում... ոչինչ, ոչինչ...

Տ. ԼԸՇԱ. (Բոլորովին յուզուած). Ժերմէն... դա քո հայրն է։ ԻՍԻԴ. (Կնոջը). Թող... Թող (Ժերմէնին), Ա՛հ... ո՞վ է քեզ կրթել... ո՞վ է քեզ կերակրել։

Տ. ԼԸՇԱ. (Աղերսաղին ծայնով). Իմ սիրելիս... դա քո դուստրն է...

ԻՍԻԴ. (Ժերմէնին). Քո ճոխ կեանքը... քո զգեստները...

ԺԵՐՄ. Այն հասակից սկսած... երբ ես կարողացայ հասկանալ, ինքս ինձ հաշիւ տալ, թէ որտեղից, ինչ աղբիւրներից էի ստանում քո ճոխութիւնները... ես նրանց ատեցի... Քո զարդ-զարդարանքները... ես նրանցից հրաժարուեցի... որովհետեւ նրանք ինձ այրում էին... լսում ես... Որովհետեւ այստեղ եղած ամեն, ամեն ինչ... միայն արատ, կոդուպետ... լաց եւ արտաքուր է... Գո՛ղ... Գո՛ղ...

Տ. ԼԸՇԱ. (ձշալով). Լա՛իր... լռի՛ր... Ա՛հ թշուառ զաւակ...

ԻՍԻԴ. Թող... թող... Նա չատ է տխմար, որ կարողանայ ինձ հասկանալ... (Բռնեցքները սեղմած... ուտերը Թօթոտելով). Տեսնում եք... դեռ նա է մեզ վրայ յարձակուողը, մեզ նախատողը, մեզ կշտամբողը... (Գնալով դէպի ժերմէնը). Որքան դու յանդուգն ես, նոյնքան էլ անառակ... Ի՞նչպէս ես, թշուառական, դու դեռ համարձակում խօսել...

ԺԵՐՄ. Ես խղճիս վրայ ոչ մի մեղք չ'ունեմ...

ԻՍԻԴ. Ուրեմն... քիչ առաջ... մարկիզի մօտ... դու սուտ էիր խօսում...

ԺԵՐՄ. Զուտ ճշմարտութիւն էր...

ԻՍԻԴ. (Անարդ արտայայտութեամբ). Տղամարդ... մէթէ դա քեզ զգուանք չէ պատճառում, օրիորդ Առաքինութիւն...

ԺեմրՄ. Աւելի լաւ է՝ մի մարդու անձնատուր լինեմ, քան թոյլ տամ, որ ինձ վաճառեն...

ԻՍԻԴ. Բաւական է... Վերջ դիւր քո ֆրաղներին ու յոխորտանքին... Ես քեզ նման չատ շատերին եմ ճնշել... նուաճել... Ես քեզ ցոյց կը տամ, անառակ աղջիկ...

ԺեմրՄ. Դու ինձ ոչինչ չես կարող...

ԻՍԻԴ. Ո՞չ...

Տ. ԼԸՇԱ. Իմ բարեկամս... դիմա...

ԻՍԻԴ. (Իր կնոջը). Օ՜հ, դու էլ զահլաս տարար... Հէնց քո թուլութիւնն է ամեն ինչի պատճառը... Այս աղջկանը ես ապրել կը սովորեցնեմ... (Իր դստերը). Ո՞ւր, որտեղից ես նրան գտել... Ո՛ւր ես նրան որսել:

ԺեմրՄ. Քիչ սպասիր... Իսկոյն նրան կը ճանաչես...

ԻՍԻԴ. Ի՞նչպէս. քո հրամաններին պիտի սպասեմ... Կամենում ես, որ քեզ խեղդեմ... Ես քեզ կը ստիպեմ խօսել... Նրա անունը...

ԺեմրՄ. (Գնում է դէպի տերրասի վրայ քացուած դուռը... այնտեղից կանչուեալ). Լիւսիէն... Լիւսիէն...

ԻՍԻԴ. (Այդ կոչից սկզբում դարմացած է երեւում... Լոռ-Թին). Լիւսիէն... Ի՞նչ Լիւսիէն է... Գարթն... Ո՛չ, ոչ... Դա անկարելի է... դա խենթութիւն է...

Տ. ԼԸՇԱ. Ես կարող էի այդ ենթադրել... (Տերրասից շտապով գալիս, ներս է մտնում Լիւսիէն):

ՀԻՆԳԵՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, Տ. ԼԸՇԱ, ԺԵՐՄԷՆ, ԼԻԻՍԻԷՆ.

ԻՍԻԴ. (Լիւսիէնին տեսնելով՝ մի վայրկեան մնում է շուարած: Դիմելով Լիւսիէնին). Այն դու չես եղել, չէ... (Լիւսիէն լռում է). Դու ես եղել... (ԼոռԹին)... Ուրեմն... ամեն ինչ... կատարեալ է... շոյնիակ գուարճալի... (Բռնեցքները բարձրացրած յանկարծ յարձակում է Լիւսիէնի վրայ)... Աւազակ... աւազակ: (Ժեմրէն միջամտում է... Լիւսիէն հրում է Խիդորին):

ԼԻԻՍ. (Խաղաղ եւ անյողորդ). Զգոյ՛, եղէք, պարոն... (Խիդոր կանգ է առնում... մի քանի անկապ բառեր արտասանում եւ քիչ հեռանում)... Որքան կարող եմ, ես ինձ զսպում եմ... Սակայն նախազգուշացնում եմ, որ ես ձեզ թոյլ չեմ տալ՝ բռնութիւն գործ դնէք...

ԻՍԻԴ. (Խռպոտ ձայնով). Դու ես... այժմ դու ես ինձ դաս

ես տալիս... Աւագակ... դեռ բաւական չէ, որ գալիս ժառանգու-
հիներ ես հրապուրում խաբում... Սակայն իմ փողին դու դեռ
չես տիրացել...

ԼԻԻՍ. Ոչ ոք էլ ձեր փողը չի ուղղում...

ԺԵՐՄ. Նա ինքն էլ այդ շատ լաւ գիտէ...

ԻՍԻԴ. Այո... այո... Սակայն ի՞նչպէս... Հրաշալի միտք էք
ունեցել... Յանցանք է, գործել ենք... Ի՞նչ արած... ընտանե-
բար նրան ուղղենք, մոռանանք... հաշտուենք, իրար հետ զրո-
կուենք... իրար հետ զրկուելով՝ զրկենք և հայր Լըշայի միլի-
ոնները... Այդպէս է, չէ... Սակայն քո հաշիւդ դու քիչ վատ
ես կազմել...

ԼԻԻՍ. Դուք սխալւում էք, պարոն... Ես ոչ մի հաշիւ չեմ
ունեցել...

ԻՍԻԴ. Անկասկած...

ԼԻԻՍ. Ժերմէն իր մաս ժառանգութիւնից հրաժարւում է
ընդմիջաւ:

ԺԵՐՄ. Իմ գոյութեան օրից սկսած ես նրանից միշտ
հրաժարուելիս եմ եղել...

ԻՍԻԴ. Ո՞վ է նրա հրաժարուելու վրայ ուշ դարձնում...
(Լիւսիէնին). Ես ինքս եմ նրան ժառանգութիւնից զրկում...
Սակայն չը կարծես... (Յոյց տալով Ժերմէնին)... Նա ոչինչ չի հաս-
կանում... ոչինչ... գոնէ դու չը կարծես, որ դստեր անկա-
րելի է ժառանգութիւնից զրկել... Ծիշտ է, օրէնքն արգելում
է... սակայն այդ օրէնքի վրայովն էլ կարելի է անցնել... Ես
աւելի դժուար գործեր եմ յաջողեցրել...

ԺԵՐՄ. Ես այդ շատ լաւ գիտեմ:

ԻՍԻԴ. Եւ ոչ մի soul... երբէք... լսում ես... Նա ինձա-
նից երբէք ոչ մի սու էլ չի ստանալ...

ԺԵՐՄ. Աւելի լաւ:

ԻՍԻԴ. Եթէ նոյնիսկ նա մի օր վերադառնայ, աղերսի,—
և նա կը վերադառնայ... այդ երկար չի տևիլ,—աղերսելով դայ,
իմ դրան առջի սովամահ ընկնի... Թշուառութիւնից սատկէ...

ԺԵՐՄ. Թշուառութիւն... սակայն ես դրանով կեսնք կը
ստանամ... Ես հէնց այդ եմ ուղղում, աղերսում, հայցում...
Թշուառութիւն... Ահա թէ վերջապէս ես ինչ կարող եմ քեզա-
նից ընդունել...

ԻՍԻԴ. Յիմար... Եւ սա իմ դուստրն է... Իսկ նա էլ՝ այն
միակ մարդը, որին ես սիրում էի: Բնականաբար... Ես տըխ-
մար էի, տխմար... (Մտնենալով Լիւսիէնին). Սակայն, Գարրօ...
Դուք իրաւունք չ'ունէք... լաւ մտածեցէք...

ԼԻԻՍ. Լաւ եմ մտածել...

ԻՍԻԴ. Դու իզիտո չես... Ախր դու ինչ պիտի անես:
ԼԻԻՍ. Ես կ'աշխատեմ...

ԻՍԻԴ. Իհարկէ... Ամիսը երկու հարիւր ֆրանկ... Իսկ յետոյ... Ես քեզ ճանաչում եմ... դու մի իդէալիստ, ցնորքներով ապրող երիտասարդ ես... Դու երբէք չես կարող փող աշխատել...

ԼԻԻՍ. Աշխարհումս միայն փողը չէ...

ԻՍԻԴ. Միայն փողը չէ... Աղնիւ խօսք, դու էլ նրա նման ես խօսում... Սակայն դու անցեալներում այդպէս չէիր... Ուրեմն նա քեզ էլ է իր խենթութեամբ թունաւորել... (Աւելի եւս մօտենալով Լիւսիէին)... Դա անկարելի է... Ես նրանով պարծենում էի... Ո՛րպիսի գեղեցիկ ծրագիրներ եմ ես նրա համար կազմել... Իմ գոհատը... Ի՞նչ էր նա անում ինձ համար, ինչ ծառայութիւն մատուցանում... սչ մի... Ա՛հ, այն օրը աւելի լաւ էր՝ իմ ոտը կոտրուէր, քան քեզ օգնութիւն ձեռք կարկառէի և ցեխի միջից դուրս քաշէի... Դու հօ չես հերքել, որ ես քեզ թշուառութիւնից ազատեցի...

ԼԻԻՍ. Պարոն... ես դիտեմ՝ թէ ինչ եմ ձեզ պարտ:

ԻՍԻԴ. Եւ դու փոխարէնը հատուցանում ես...

ԼԻԻՍ. Ես պարտ էի իմ ժամանակը... աշխատանքը... իմ հաւատարմութիւնը... Եւ այդ ամենը ես ձեզ վճարեցի...

ԺԵՐՄ. Դա ոչ մի առնչութիւն չ'ունի... Դու միայն պարտ ես նրան վերագարձնել քո հաշուատետքները:

ԻՍԻԴ. Լռիր... Նախ... ես քեզ արգելում եմ իմ ներկայութեամբ նրա հետ «դու»-ով խօսել...

ԼԻԻՍ. (Փորձում է քաղցրութեամբ ձերմէնի վրայ ազդել, որ նա լուռ մնայ). Իսկ ինչ վերաբերում է իմ դադափարներին... իմ զգացմունքներին... դա իմ գործն է... այդ ինձ է պատկանում... Ես պարտ չեմ նրանց եւ ձեզ զոհել... Իմ սէրս դէպի ժերմէնը սչ մի կապ, առնչութիւն չ'ունի իմ դէպի ձեզ ունեցած երախտապարտութեան հետ:

ԻՍԻԴ. (Պայթելով). Ա՛հ, բաւական է, որքան ֆրագներ լըսեցի ես այսօր... Դու գնում, ձգում... հեռանում, անհետանում ես... Դու փող ես ուզում... Լաւ... ուղղակի ասա և քո զինք որոշիր... Ես կը վճարեմ...

ԼԻԻՍ. Դուք խելագարուել էք, պարոն:

ԻՍԻԴ. Դու առաջին մարդը կը լինես, որ կարողանում է խաբել Իսիդոր Լըշային... Դա քիչ բան չէ... Հը՞, քո զինք...

ԼԻԻՍ. Համբերութիւն էլ չափ ու սահման ունի...

ԻՍԻԴ. Փողի հարց չը կայ, ուրեմն... Ո՞չ... Այդպէս է... Կը նշանակէ սիրահարուած էք... (Նրանց երկար դիտում է... ապա սկսում չարութեամբ ծաղրել)... Ապուշներ... Ես էլ չատ

տխմարն եմ եղել... Ինձ ինչ... Իմ շատ հարկաւորն է... Կորէք... Կորէք, գլխիցս ոստ եղէք... Մէկը՝ համբակ... միւսը՝ խելագար... Հրաշալի զոյգ... Գնացէք, սովից սատկեցէք, ուր որ էլ կամենաք... Դա կը լինի իմ վրէժխնդրութիւնը... Իմ ուրախութիւնը...

ԺԵՐՄ. Գնա... Լիւսիէն... Ես իսկոյն կը հետեւեմ քեզ... (Լիւսիէն դուրս է գնում... Տիկ. Լըշա տեղից բարձրանում, կանգնում է. դէմքը վիշտ եւ ցաւ է արտայայտում):

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, Տ. ԼԸՇԱ, ԺԵՐՄԷՆ.

(Խիդոր՝ խելագարուած, որպէս մի գազան, սենեակի մէջ այս այն կողմն է ընկնում, մանդալիս՝ ամոռները խառնելով, հրելով, ոտքերը գորգին խփելով):

Տ. ԼԸՇԱ. (Աղերսագին ծայնով). Լսիր, բարեկամս...

ԻՍԻԴ. Ա՛հ... վերջապէս դու զարթնում ես... Քո աղջկանը քո աչքի առջև գողանում, տանում են... և դու՝ որպէս մի կապոյց, բազկաթոռի մէջ ընկած, մի բառ անգամ չես արտասանում... մի շարժումով անգամ չես անում...

Տ. ԼԸՇԱ. Լսիր... բարեկամս...

ԻՍԻԴ. Գարրօն... Մի աղքատ... անպիտանի մէկը...

(Գրասեղանի մօտով անցնելիս՝ բռնեցրով սաստիկ հարուած է տալիս): Եթէ նա... լինէր գոնէ... ես չը գիտեմ...

Տ. ԼԸՇԱ. Ինձ լսիր... Բարկութեամբ դու ոչինչ չես կարող անել... Զաւակների... Թէկուզ յանցաւոր զաւակների հետ բարկութեամբ չեն խօսել... Դու այլևս չես կարողանում քեզ զսպել... Թնդ ես նրա հետ կը խօսեմ:

ԻՍԻԴ. Դու նրան ասելու ոչինչ չ'ունես...

Տ. ԼԸՇԱ. (Քիչ հրամայական ծայնով). Դու ինչ գիտես... Մի րոպէ թող ինձ ժերմէնի հետ միայնակ...

ԻՍԻԴ. Ես այդ շատ եմ սիրում... Գնացէք... կեղծ-կեղծ լացէք, գայլի արտասուք թափեցէք... Բայց միայն ես նրան այստեղ այլևս չը տեսնեմ, հա...

(Աղմուկ-շառաչիւնով դուրս է գնում):

ԵՐԹՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԿ. ԼԸՇԱ, ԺԵՐՄԷՆ.

(Տիկ. Լըշա՝ շփոթուած, աղերսալի դէմքով նայում է մի քանի վայրկեան իր աղջկան։ Յետոյ պարզում է նրան իր ձեռքերը)։

Տ. ԼԸՇԱ. Ժերմէն... Իմ սիրելի ժերմէնա... (Ձեռքերը շարունակ պարզած, կամաց, փոքրիկ քայլերով մօտենում է նրան)։ Իմ փոքրիկ ժերմէնա... (Ժերմէն գլուխը քիչ շուռ է տալիս... քիչ յետ ու յետ գնում, ծիգ է թափում, որ չը յուզուի, չը փափկի... Ապա յանկարծ վազում, նետում է մօր զիրկը)։

ԺԵՐՄ. Մայրիկ... մայրիկ...

(Երկուսն էլ զրկախառնում, համբուրւում են եւ արտասւտում... Երկար զրկախառնութիւն, մերթնդմերթ հեծկտանք եւ հեծեծանք... Տիկ. Լըշա՝ ժերմէնի գլուխը ձեռքերով բռնած, շոյում, փաղարշում է)։

Տ. ԼԸՇԱ. Դու այստեղից չես գնալ, չէ... Ինձ 'չես թողնիլ... Ասա, որ դու ինձ չես թողնիլ... Դա չատ... չատ սոսկալի բան կը լինի...

ԺԵՐՄ. Ինձանից այդ մի խնդրիր... մայրիկ... այժմ չատ ուշ է...

Տ. ԼԸՇԱ. (Աւելի զգուանքով). Ո՛չ. ո՛չ... Իմ սիրելի ժերմէնա... մի ասա, թէ չատ ուշ է... Միայն... ո՛չ այժմ... ո՛չ այսօր... դա խելագարութիւն կը լինէր... Քո հայրը չատ է զայրացած... բայց վաղը... չուտով... մի քանի օրից յետոյ... ես նրա հետ կը խօսեմ... ես նրան կը հասկացնեմ... եւ նա ինձ կը լսէ... Այժմ... այժմ... նա ինձ կը լսէ... ես քեզ խոստանում եմ... եւ նա կը համաձայնի... որ դու Գարբօի հետ ամուսնանաս...

ԺԵՐՄ. (Հօր անունը լսելիս դէմքը փոխւում, սառնութիւն է արտայայտում). Նա երբէք չի համաձայնիլ...

Տ. ԼԸՇԱ. Սակայն քանի որ ես քեզ ասում եմ... քանի որ ես յանձն եմ առնում... Գիտես... քո հայրը...

ԺԵՐՄ. Հօրիցս մի խօսիր...

Տ. ԼԸՇԱ. Լաւ... նրանից այլեւ չեմ խօսիլ... Բայց դու հօ ինձ մօտ կը մնաս... չէ։

ԺԵՐՄ. Մայրիկ... ես քեզ խնդրում եմ... ինձանից մի

սլահանջիր այնպիսի բաներ, որ ես այլևս անկարող եմ անել...
Ես այստեղից պիտի մեկնեմ...

Տ. ԼԼՇԱ. Ոչ... հչ... դա անկարելի է... Ասա... բայց ես
խնչ կ'անեմ... խնչ կը դառնամ այս մեծ ահազին տանը... մեն-
միայնակ... Մտածիր... մեն-միայնակ... այս հասակում... Ես կը
մեռնեմ... Ոչ, հչ... Ժերմէն... սիրալիր եղիր... բարի եղիր...
Մի թողնիր ինձ այստեղ մեն-միայնակ...

ԺԵՐՄ. Ե՛կ մեզ հետ... Մեզ հետ դու աւելի երջանիկ կը
լինես...

Տ. ԼԼՇԱ. Աւաղ... դա ես անկարելի է... Ես նրա հետ եմ
ապրել... հարկաւոր է, որ նրա հետ էլ մեռնեմ... Ես չեմ կարող
նրան ձգել, հեռանալ... Մեզք գործած կը լինեմ... Ո՛չ... ես չեմ
կարող... չեմ կարող... (Լռութիւն)։ Այո... այո... ես այժմ եմ
հասկանում... Քեզ, իմ խեղճ փոքրիկս, այնքան էլ չեն սիրել...
Քեզ չեն սիրել, ինչպէս հարկաւոր էր... Մենք մեղաւոր ենք...
մանաւանդ ես... Այո... այդ ճիշտ է... Եւ ես զգլում եմ... Սա-
կայն դու ես քիչ մեղաւոր ես... ինձ հետ եղած ժամանակ...
դու շարունակ... տխուր ու տխուր... Շարունակ փակուած, ին-
քըզ քո մէջ խորասուզուած... Այդ ինձ երբեմն զրգուում էր...
եւ էլ քեզ հետ քիչ կոշտ էի խօսում... որոհեաւ քեզ լաւ չէի
ճանաչում... քո հողին, քո ներքին տխրահր լաւ չէի հասկա-
նում... Բայց ես այնպէս... ես քեզ սիրում էի... Եւ այժմ էլ...
եւ քեզ կը սիրեմ... քեզ կը սիրեմ... կը սիրեմ... կը սիրեմ...

ԺԵՐՄ. Ես նոյնպէս... յաճախ քեզ սխալ եմ հասկացել...
Ես եւ քեզ լաւ չէի ճանաչում...

Տ. ԼԼՇԱ. (Շտապով). Իսկ այժմ... քանի որ իրար ճանաչում
ենք...

ԺԵՐՄ. Շատ ուշ է...

Տ. ԼԼՇԱ. Աստուած իմ... Միթէ կարելի բան է... Օ՛հ, ե-
թէ մենք ապրելիս լինէինք մի բոլորովին փոքրիկ տան մէջ...
այս ամենը չէր էլ պատահիլ... Այս մեծ զգեսակը... այն մեծ
ցուրտ, այնքան օտար սենեակները... այս բոլոր ճոխութիւնը...
փողը... այստեղ գտնուող բոլոր ինչն է պատճառ, որ մենք խուլ
ենք մնացել, չենք լսել սրտի թրթռոցը, սրտի ձայնը... Աստուած
իմ... այս ինչ աղէտ է... Այժմ եմ ես միայն գտնում իմ աղջը-
կան... հէնց այժմ էլ նրան ընդմիշտ կորցնում... (Հեկեկում է)...
Ես քեզ շատ ասելիք ունեմ... ե յետոյ... ես այլևս չը գիտեմ...
այլևս չը գիտեմ... Գլխիս վրայ, կարծես, մի ահազին ծանրու-
թիւն կայ... աչքերիս առջև, կարծես, ամպ...

(Աղջկանը աւելի ամուր է գրկում)։

ԺԵՐՄ. Մայրիկ... թե՛ղ մեկնեմ...

Տ. ԼԸՇԱ. Ո՛չ, ո՛չ... Իմ սիրելի ժերմէնս... Դեռ մի մեկ-
նիր... աղաչում եմ քեզ... Վաղը... դոնէ մի քանի օրից յետոյ...
Օ՛հ, ինձ այսօր միայնակ մի թող... ինձ այսօր... միայնակ մի
թող...

ԺԵՐՄ. Ես չեմ ուզում, որ իմ հայրը ինձ կրկին այստեղ
տեսնի... Ես այլևս ատելութիւն չեմ զգում... Թող ինձ գնամ...
սիրտս ատելութիւնից թեթեացած...

(Նա փորձում է մօր գրկից դուրս գալ, որ նրան փափկաց-
նում, թուլացնում է):

Տ. ԼԸՇԱ. Աստուած իմ... Աստուած իմ... (Արտասուելով).
Դու ինձ նամակ կը գրես... խոստացիր, որ ինձ կը գրես... Եր-
գուի՛ր...

ԺԵՐՄ. Ես քեզ խոստանում եմ... Երդում եմ քեզ...

Տ. ԼԸՇԱ. Եթէ դու Պարիզ ես գնում... Իսկոյ՛ն ե եթ յատ-
նիր ինձ քո հասցէն...

ԺԵՐՄ. Լաւ... Իաւ... մայրիկ...

Տ. ԼԸՇԱ. Ես յաճախ... քեզ տեսնելու կը գամ... Ո՛չ որ չի
իմանալ... Ես ո՛չ ոքի չեմ ասել... Իսկ եթէ դու հիւանդանաս...
Աստուած իմ... Անկարելի է, անկարելի... Դու փող չ'ունես...
Իսկ նա... նա էլ, անկասկած, նոյնպէս հարուստ չէ... Ի՞նչ կա-
նես դու... (Յանկարծ... մտաբերելով)... Ուրեմն... այն երեք հա-
րիւր ֆրանկը...

ԺԵՐՄ. (Մեծ գթութեամբ). Ո՛չ... իմ խեղճ մայրիկս:

Տ. ԼԸՇԱ. Եթէ կարիք կը զգաս... մի որեւէ բանում... զը-
րի՛ր ինձ...

ԺԵՐՄ. Մնաս բարեաւ, մայրիկ...

(Նորից երկար գրկախառնում են... Ժերմէն աղատում է,
շտապով, վաղելով դուրս գնում):

Տ. ԼԸՇԱ. Ժերմէն... Ժերմէն... մի մեկնիր... մի մեկնիր...

(Այլա նայում է իր շուրջը... Սարսափահար, տխուր, թու-
լացած ընկնում է մի բազկաթոռի վրայ... Լռութիւն... Ներս է գալիս Ի-
սիդոր):..

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ՏԻԿ, ԼԸՇԱ, ԻՍԻԴՈՐ.

(Ներս է մտնում Իսիդոր՝ գլխակոր, դէմքը՝ այլալուծած, հայեացքը՝ ծուռ,
ձեռքերը պանտալոնի զրպաններում դրած):

Տ. ԼԸՇԱ. (Առանց գլուխը բարձրացնելու). Նա գնաց:

ԻՍԻԴ. Դժսխքը նրան:

Տ. ԼԸՇԱ. (Աչքերը ամուսնու վրայ գցելով). Էլ ուրիշ բան չը գտար ասելու...

ԻՍԻԴ. (Անարգ արտայայտութեամբ). Ի՞նչ...

Տ. ԼԸՇԱ. Յետ կանչիւր նրան... Մի որեւէ բան ասա, գոչիւր...

ԻՍԻԴ. Հանգիստ թող, հը՛:

Տ. ԼԸՇԱ. (Տեղից բարձրանալով). Շատ լաւ... Վերջապէս իմ զահլէս էլ գնաց... Սիրտս շատ է լցուած... Ինչ որ մեզ պատահում է... մեղաւորը դու ես... լսում ես... մեղաւորը դու ես...

(Ուղղւում է դէպի դուռը):

ԻՍԻԴ. Է՛յ, դու... դու չես քաշւում... հա՛... Եթէ ցանկաւ նում ես նրան միանալ... բարի ճանապարհ...

Տ. ԼԸՇԱ. (Վերադառնալով). Թշուառական... Դու արժանի ես, որ քո առաջարկութիւնը կատարեմ...

ԻՍԻԴ. Բոլորն էլ ինձ զէմ են... Շատ լաւ... Աւելի լաւ: Ա՛յ պիտի ծիծաղենք, հա՛... (Տիկ. Լըշան դուրս է գնում):

ԻՆՆԵՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, յետոյ ԿԱՌԱՎԱՐԻԶԸ.

(Խփողը գնում, նստում է իր գրասեղանի առջեւ... Մի վայրկեան խորհում է... յետոյ հրում սեղանի վրայի թղթերը):

ԻՍԻԴ. Ա՛հ, պարոն մարկիզ... (Թօթւում է ուսերը): Ա՛հ, դու կարծում ես, թէ ամեն ինչ վերջացաւ... Օ՛հ, այո՛... Շատ բարի... այ պիտի խնդանք...

(Նա կռննում է գրասեղանի վրայ, ղլուխը յենում, ձեռքերով բռնում... Ուշով-մտքով անցնում, հետանում, վերանում է... Կարինետի դռնով յանկարծ շտապով ներս է վազում կառավարիչը... բոլորորին շրփոթուած, սարսափահար, եւ դաժան...)

ԿԱՌԱՎ. Պարոն... պարոն...

ԻՍԻԴ. (Առանց տեղից շարժուելու, խուլ ձայնով). Ի՞նչ կայ...

ԿԱՌԱՎ. (Որ հազիւ է կարողանում խօսել). Մի գժբախտութիւն... մի սոսկալի գժբախտութիւն...

ԻՍԻԴ. (Շարունակ տեղից չը շարժուելով). Ես քեզ արդելում եմ նրա մասին խօսել... Դա քո գործը չէ...

ԿԱՌԱՎ. Ձեր որդին...

ԻՍԻԴ. Իմ աղջիկը... ապուշ...

ԿԱՌ. Խօսքը ձեր աղջկայ մասին չէ...

ԻՍԻԴ. Նա մեկնել է... այժ... Շատ բարի...

ԿԱՌ. Մակայն այդ չեմ ասում... պարոն... ո՛չ, ո՛չ...

ԻՍԻԴ. Գոռելի ես... Խելագարուել ես դու...

ԿԱՌ. Դուք էջք հասկանում, պարոն։ Ձեր որդին... (ձիգ թափելով)։ Պարոն Քսավիէն...

ԻՍԻԴ. Լաւ, յետոյ...

ԿԱՎ. Սպանուել է...

ԻՍԻԴ. (Տեղը անշարժ նստած... Գլուխը շարունակ ձեռքերի մէջ ձագցրած... Երկար լուռութիւն... Վերջապէս նա ձեռքերը զլսից յետ է վերցնում... Ջարմացած նայում է կառավարչին, որ նա գտնուում է այդ տեղ)։... Ի՞նչ ես ասում...

ԿԱՌ. Պարոն Քսավիէն սպանուել է...

ԻՍԻԴ. (Տեղից ցատկում է... եւ մի ուտիւն գործելով՝ ցցում կառավարչի առջեւ, նրա կոկորդը բռնում եւ սեղմում), Ի՞նչ ասացիր դու, իդիոտ... (Նրան ցնցում է... կառավարիչը ձգնում է ազատուել)։ Համարձակուիր, ապուշ, կրկնել այն, ինչ որ ասացիր...

ԿԱՌ. (Խռպոտ, խզուած ձայնով)։ Թողէք ինձ, պարոն, թողէք ինձ...

ԻՍԻԴ. (Կառավարչին բաց թողնելուց յետոյ)։ Լաւ... խօսիր...

(Մինչ կառավարիչը հետզհետէ կը խօսի, Իսիդորի աչքերը մեծանում... դէմքը այլայլում է...)

ԿԱՌ. (Իր բառերը յօշելով)։ Պարոն Քսավիէի աւտոմոբիլը... դուրս գալով... Մարեկուրից... սաստիկ արագութեամբ... ամբողջ թափով... գալիս... փողոցի անկիւնում... շուտ է գալիս... տապալուում... պարոն Քսավիէին նետում... զարկում է... Գաղօի սրճարանի պատին... այնպիսի ուժգնութեամբ... որ նրա գլուխը ջարդուում է... տեղն ու տեղը սպանուում...

ԻՍԻԴ. (Գողգոթալով, սարսափահար... բերանը ծուլած, դէմքը կարծես կաթուածահար եղած)։ Ի՞նչ... Ի՞նչ... (Բերանը նորից բացուում է... սակայն ո՛չ մի հնչիւն չի արտասանում)։

ԿԱՌ. Դքսի որդին է... այդ անցքը տեսնելով... ձիով եկել... այս անուշի լուրը բերել...

ԻՍԻԴ. Այդ... այդ...

(Նրա շրթունքները բառեր են թռնուում, որ չեն լսում...)

ԿԱՌ. Պարոն Քսավիէի մարմինը բերում են այժմ... Տասը բողբոջից յետ... այստեղ կը լինի...

(Իսիդորը խօսել այլեւ չի կարողանում... Հանում է իր փողպատը... կտրում շապկի կոճակը... կտրծքը բանում... Դժուարութեամբ շնչում... Օձիքը՝ բաց, ծայրերը՝ այտերին դպչելիս... Նա երե-

ւում է... Կառավարչի օգնութեամբ գնում, ընկնում է մի բազկաձողի վրայ... Եւ... յանկարծ... արտասուում է... ձեկեկանքներից ամբողջ մարմինը ցնցւում):

ԿԱՌ. Պարոն... պարոն...

ԻՍԻԴ. (Մի քանի վայրկեանից յետոյ խոստ, հաղիւ լսելի ծայնով). Ես ամեն ինչ կորցրի... մի օրուայ մէջ... Ամեն ինչ կորցրի... (Հեւալով). Իսկ... տիկինը...

ԿԱՌ. Ես... սիրտ չ'արի...

ԻՍԻԴ. Հա... հա... (Լռութիւն). Մի օրուայ մէջ... (Նորից լռութիւն)... Օդ... օդ... ինձ օդ տուէք... Ես խեղդւում եմ... (Կառավարիչը գնում, բաց է անում պատուհանը... ապա Իսիդորի թեւից բռնելով՝ տանում է պատուհանի մօտ... Իսիդոր ազահաբար շընջւում է):

ԿԱՌ. Այժմ... պարոն... լաւ էք...

ԻՍԻԴ. Այո... այո... լաւ եմ... (Լռութիւն.— Ող է ներշնչւում): Այժմ... շատ լաւ եմ... ուզում եմ գնալ այնտեղ...

ԿԱՌ. Դուք թոյլ էք... պարոն... չէք կարող...

ԻՍԻԴ. Ո՛հ... հէ... այժմ անցաւ... Ես ուզում եմ գնալ... (Նա մի քանի քայլ է անում, կառավարիչը կամենում է օգնել)... Ո՛հ... թողէք... այժմ ես կարող եմ... (Մի քանի դողողիւն քայլ է անում... Դուռը բացւում... ներս են գալիս Ֆինկ եւ Գրուզ):

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԻՍԻԴՈՐ, ՖԻՆԿ, ԳՐՈՒԳ, ԿԱՌԱՎԱՐԻԶԸ, յետոյ մի ԾԱՌԱՅ.

ԿԱՌ. Նստեցէք... պարոն... տեսնում էք... որ չէք կարողանում... (Նա մի բազկաձող է բերում, մօտեցնում Իսիդորին... Ֆինկ եւ Գրուզ դէմքերը սարսափահար, կանգնում են բազկաձողի երկու կողմերին):

ԳՐՈՒԳ. Օ՛հ, Ո՛րպիսի դժբախտութիւն:

ՖԻՆԿ. Մենք եկել ենք, մեր ցաւակցութիւնը, սրտանց ցաւակցութիւնն ենք ձեզ յայտնում...

ԻՍԻԴ. Ա՛հ, իմ բարեկամներս... իմ սիրելի բարեկամներս...

ՖԻՆԿ. Ձեր ընկերակիցները...

ԻՍԻԴ. Իմ սիրելի ընկերակիցները...

ԳՐՈՒԳ. Եւ այնպէս երիտասարդ...

ՖԻՆԿ. Եւ սրպիսի ապագայ էր նրան սպասում...

ԳՐՈՒԳ. Սարսափելի է...

ԻՍԻԴ. Մի օրուայ մէջ ես ամեն ինչ կորցրի... մի օրուայ մէջ...

ՖԻՆԿ. Մենք կը ցանկանայինք ձեզ մխիթարել... Բայց, աւանդ... մի այսպիսի զժախտութեան առջև մխիթարութիւն չը կայ...

ԻՍԻԴ. Մի օրուայ մէջ...

ԳՐՈՒԳ. Ժամանակը միայն կարող է... Եւ դեռ...

ՖԻՆԿ. Մի այնպիսի զեղեցիկ երիտասարդ... (Խիղոր զլուխը ծոծկում է)... Եւ... քիչ առաջ նա այստեղ էր... առջիկ... աշխոյժ... ուրախ... զուարթ, նազելի...

ԻՍԻԴ. Իմ սիրելի բարեկամներս...

ԳՐՈՒԳ. Եւ որքան սիրում էիք նրան... Ա՛հ... Անարդար էր այս...

ԻՍԻԴ. (Ձեռքերը Գրուգին եւ Ֆինկին պարզելով). Իմ սիրելի բարեկամներս...

ԳՐՈՒԳ. Արիացէք... Հարկաւոր չէ ընկճուել...

ԻՍԻԴ. Օ՛հ... այժմ...

(Երեւում է, որ Ֆինկի եւ Գրուգի խօսակցութեան նիւթը վերջացել է... Նրանք ամօթխած իրար են նայում... եւ նշաններ անում: Փոքր լուծիւն).

ՖԻՆԿ. Բարեհաճեցէք ներել մեզ... եթէ մենք ստիպուած... մի բռնէք... ձեր սուգը վրդովներ...

ԳՐՈՒԳ. Իհնարկէ... մենք լաւ զիտներ... որքան զժուարիւն, ցաւալի է... այսպիսի բռնահերում գործ կատարելը... (Գրպանից հանում է երկու թերթ թուղթ, քանում). եթէ մենք ստիպուած չը լինէինք այսօր անդիցս մեկնել... հաւատացած եղէք...

(Խիղոր երկար նայում է Գրուգին եւ Ֆինկին... Գրուգ պարզում է երկու թերթերը):

ՖԻՆԿ. Պայմանագիրը, որ դուք մեզ խնդրել էիք կազմել... (Խիղոր լուծ է)... Յիշում էք...

ԻՍԻԴ. Ո՛չ... հէ... հէ այսօր... Ինձ հանգիստ թողէք...

(Անընդհատ նրանց է նայում):

ԳՐՈՒԳ. Թող ենք տալիս մեզ թախանձանօք խնդրել...

ԻՍԻԴ. Ո՛չ... հէ... Ինձ հանգիստ թողէք...

ՖԻՆԿ. Գիտէք...

(Գրուգ թղթերը նորից ներկայացնում է):

ԻՍԻԴ. (Քիչ լուծիւնից յետոյ: Սոսկալի դէմքով): Շատ լաւ... Տուէք...

(Խլում է նրա ձեռքից թերթերը):

ԳՐՈՒԳ. Ծշտապէս ձեր ցանկութիւնների համաձայն ենք կազմել...

ՅԻՆԿ. Ճշտապէս...

ԻՍԻԴ. (Կարդում է... ձեռքերը դեռ դողում են... Երբեմն-երբեմն նա ձեռքը դէպի կոկորդն է տանում... Կարդալուց յետոյ... սոսկալի հայնացքով նայում է իր ընկերակիցներին... Նրա ձայնը մինչեւ տեսարանի վերջը մնում է խուպոտ եւ դողողիւն)։ **Անդգամներ էք դուք...**

ԻՍԻԴ. Ինչպէս:

ԻՍԻԴ. Գողեր...

ԳՐՈՒԳ. Սակայն...

ԻՍԻԴ Դուք զեղչել էք իմ թուղութիւնը... չահագործել իմ վիշաբ... (Նա տեղից բարձրանում է եւ անհաստատ քայլերով դնում, մոտենում է իր գրասեղանին)։

ԳՐՈՒԳ. Ես ոչինչ չեմ հասկանում...

ԻՍԻԴ. Եկէք այստեղ...

ՅԻՆԿ. Ձը լինի՞ մենք մի որեւէ բան ենք մոռացել...

ԻՍԻԴ. Եկէք այստեղ... (Իւրաքանչիւրի առջեւ դնում է այն թերթերից մէկը... իւրաքանչիւրին տալիս մի-մի գրիչ)։ **Այստեղ՝ մի ծանօթութիւն...** (Մտաով ցոյց է տալիս ծանօթութեան տեղը)... **Գրեցէք...** (Ֆինկ եւ Գրուզ տատանում են։ Իսիդոր աւելի խուլ ձայնով)։ **Գրեցէք։** (Թելադրելով)... **«Պարոն Իսիդոր Լըչա... իրան է վերապահում... վերոյիշեալ գործի... վերոյիշեալ գործի... ֆինանսական վարչութիւնը... և առևտրական ադմինիստրացիան... Այս նկատմամբ... պարոն Գրուզ և պարոն Յինկ... յօժարակամ... հրաժարուում են... իրանց բոլոր իրաւունքներէ»...** (Գրուզ եւ Ֆինկ գլուխները բարձրացնում են, գրելը ընդհատում)... **Գրեցէք...** (Թելադրութիւնը շարունակելով)... **«Հրաժարուում են... իրանց բոլոր իրաւունքներէ»...** Նրանք ոչ մի կերպ չեն կարող միջամտել... և չեն կարող... ընդգիմանալ... բոլոր այն կոմբինացիաներին»...

(Յանկարծ վազելով ներս է գալիս մի ծառայ)։

ԾԱՌ. (Սարսափած). Պարոն... Պարոն Քասալիէի մարմինը բերում են... Տիկինը ուշաթափուած... ընկած է մեծ սալոնում...

ԿԱՌԱՎ. (Աղերսելով). Պարոն...

ԻՍԻԴ. (Ձայնը աւելի փոխուած... Երկու ձեռքով կրասեղանից բռնում է, որ վայր չ'ընկնի)... **Գալիս եմ... Գալիս եմ...** (Կառավարիչը եւ ծառան դուրս են գնում։ Թելադրութիւնը շարունակելով)... **այն բոլոր յետագայ կոմբինացիաներին... որ գործի համար օգտաւէտ... կը դառնէ միմիայն ինքը պարոն Իսիդոր Լըչա»...** Ահա ամենը... **Ստորագրեցէք...** (Գրուզ եւ Ֆինկ ստորագրում են...) **Տուէք ինձ...** (Վերցնում է երկու թերթն էլ, նորից կարդում... ինքը եւս երկուսն էլ ստորագրում... Մի օրինակը լուռ, առանց մի բառ ասելու, տալիս է Ֆինկին... միւսը ծալում... դնում իր գրպանը... եւ առանց բարեւելու թոյլ, դողողիւն քայլերով... կահ-կարասիքից բռնելով, ուղղւում է դէպի դուրս։

Երկու ինժեներները՝ ասլշած, սարսափահար, ծնշուած՝ հայեացքները նրա վրայ յառած՝ նայում են եւ չեն գտնում ո՛չ մի բառ, ո՛չ մի շարժում... Արհաւիրքից, սարսափից մնում են տեղները սառած կանգնած... Իսիդոր առանց յետ նայելու՝ գնում, հեռանում է... Բեմի վրայ միայնակ մնալով՝ երկու ինժեներները շարունակ անշարժ եւ լուռ, բերանները՝ բաց, աչքերը սեւեռած, չեն կարողանում հեռացնել այն դռնից, որտեղից դուրս եկաւ զընաց, անհետացաւ Իսիդոր)։

ՎԱՐԱԳՈՅՐ

Ս. ՇԽԵԱՆՑ